Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԱՄՈՒԼ

ԿՍԱՍՄՍԵԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

24ՐԴ ՏԱՐԻ

1894

ԹԻՒ 9 ՄԱՅԻՍ 15

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՐՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

WIEN 7/2
BESTELLT
30.5.94
8-9 V

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Գերմանք	265	ԽՄԲ.
Բարոյական Խնդիր	271	Ն. Յ. ԳԱՍԱՊԵԱՆ
Իմ Մանկական Յիշատակներս	276	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Խուճկը	281	Յ. Ս. ԴԻՄԱՔՍԵԱՆ
Կաթի վրայ Կարեւոր Գիտելիք	282	ՏՕՔԹ. ՓԱՇԱԼԵԱՆ
Աչք եւ Արցունք	287	Գ. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ
Ջատիկն Երուսաղէմ	289	Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ
Թղթակցութիւն	292	ԵԱՇՆՈՒՐ
Լրաբեր	295	ԽՄԲ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իզմիրի Համար տարեկան արձ. մէջ. 3 ½

» վեցամսեայ 2

Կ. Պոլսոյ և այլ երկիրներու համար տարեկ. 4

կամ 17 ֆրանք. վեցամսեայ 2 ½

Ազգ. վարժապետներու համար Իզմիր տարեկ. 2 ½

դուրսերու համար » 3

ԿԱՆԽԻԿ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ա. Մամուլ կ'հրատարակէ նաև յանուագանչ չափաւոր պայմաններով։

Ո և է նամակ, յօդուած ու դրուածք ուղղակի առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Այն բաժանորդներն որ կ'փոփոխին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեզլխին՝ Օսմանեան թղթադրոշմ ուղարկելով։

Մեր հասցէն,

Խմբագրութիւն ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼՈՅ — Իզմիր

Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

GRANDS MAGASINS DIOGENIS

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Պատիւ ունինք ծանուցանել քաղքիս և շրջակայից Պատ. Հասարակութեան և մեր բազմաթիւ Յաճախորդներուն, թէ հոս և թէ այլուր, որ անցեալ երկուշաբթի Յունուար 25 է սկսեալ՝ բացուած է մեր ԱՄԱՆԱԶԻՆ ՄԵԾ ՈՒ ՅԲՆԴ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԸ բրդէ և մետաքսէ զանազան շրջազգեստներու, վերարկուներու և զանազան յարմար ամէն տեսակ ՆՈՐԵԼՈՒԿՆԵՐՈՒ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՈՐՈՂ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ մեր վաճառքանակի բոլոր ճիւղերուն։

Նմանապէս պատիւ ունինք ծանուցանել թէ՝ մշուած այն մրցումէն որ երթալով կը ծանրանայ մեր ունեցած տեսակներուն վրայ, որոշեցինք, ամենայանդուգն չանքով մը, ի վաճառ դնել մեր վաճառատան ամբողջ ապրանքները, առանց զանազանութեան, անհատապալ կերպով ԱՄԵՆԱՑԱՆ դիներով։

Մեր Աբգոյ բազմաթիւ Յաճախորդները կրնան իրենց ուէրով համոզուիլ Ձեզ անփոյթ Մնացն մեր վաճառատուններուը այցելելով։

Մեր ամբողջ ապրանքներու դիներուն վրայ եղած այս Մեծ զեղչը մինչև այսօր եղածներէն Էլ՞ աւ ԲԱՐՁՐ ըլլալով՝ ալ ուրիշ որ և է յատկութեամբ զեղչ կատարել բացարձակապէս ԱՆԿԱՐԵԼԻ լինելուն համար, մեր դիները ՆԵՐ են, ուրախալի և ԿԱՆԽԻՒ։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ԲՕ–ՕՐԼՐՄԹԻՄ ԲՕՄԲԱՆԻ ԼԻՄԻԹԸՏ

Ցբահկոյ Ըաղ

Տիկի՛ն

Պատիւ ունինք ծանուցանել Ձեզ թէ՝
կանանց վեղարներու

ՄԵԾ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՄԸ

կազմակերպած ենք, որ մեծ մասամբ կը բաղկանայ ամենէ նոր, ամենէ վայելուչ և ամենէ հարուստ կազապարներէն։

Անշուշտ գիտէք, Տիկին, թէ մեր վեղարներու ճիւղին հակողութիւնը յանձնած ենք տեղւոյս քաջածանօթ վեղարագործուհի Օր. ՄԱՐԻ ՔԱԼԻՍԻՅՆԻի որ միշտ Ձեր սրամադ բութեան տակ պիտի ճնայ վեղարի, կարնիթիւռի և այլ ամեն տեսակ զործերու համար։

Նոյն ժամանակ այս առիթէն օգուտ կը քաղենք, Ձեզ իմացընելու համար թէ՝ ի մասայ սեղի պիտի ունենայ ԱՄԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՆՈՐԵԼՈՒԿՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ։

Յուսալով թէ պիտի հաճիք Ձեր այցելութեամբը զմեզ պատուել։

Մնանք յարգանօք
ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՄԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱԸՆԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԱԼ 1828 Ի Ն

Ընկերական Դրամագլուխ և Պահեստի Ֆր. **82,000,000**

ԻՒՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30ին 50 % զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաձախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է շնորհել յաւելուածական 20 % զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'առնուն իրենց սովորական 30 % զեղչը ընելէ յետոյ։

ՅԱՆ Բ. ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH
Ընդհանուր Գործակալ Ջմիւռնիոյ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

ԳԱԲԼՕ ՊՈՒՀՄԻՋԵԱՆ

Ցրտնկոց Թաղ., Կէս-Ճամպլէթի 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամքով և դեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ ոյր և ոյր մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնումն կը ծախսին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և ոյր գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած։

փափաքողաց մասնաւոր արուեստասիրութիւնք.

ԴԻՒՐԱՄԱՏԶԵԼԻ ԳԻՆԵՐ

ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐՄԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Գալէ – Իւչ, Ր՝ը 4, 12 և 14

Կը ծախսուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, գլուխներէ և ուներէներ։ Նաև Տեղային և Եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապպրանքի վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ հարսանեկան անկողնի համար։

Գործառնեղէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՕՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ ոչխէ ոչխ, ըխլըխ, վէրէս, ըռոտչի, ապրէն և ամուսնական համար գունաւոր կաշիներ։

Առնամանիներու գինը պիտի որոշուի Հայդոցին ոտքին թուղին համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր Պատ. Յաճախորդներուն և Արդ. Հասարակութեան, որովհետև՝ այս դրութեամբ՝

0/0 10-15 ՆՈՒՒԱԶ պիտի վճարեն։

ԳՆԵՑՈՒՅՑ

Թ՝ը 40 էն Գ՝ը 48 — Մէկուռ 33 Ք՝

Կօշիկ Նաբուխ կրկնաներբան	Թիւը	դրշ	7
Կօշիկ Բէյ	»	»	6
Պօթ Լաճ-ռոր և Լաստառ	»	»	3 25
Ըօթին ու սունկաւոր (մանթարը)	»		2 75
Պուքէզ ու » »	»	»	2 75
Կէս պուքէզ և կէս պօթ	»	»	2 50
Ալարբին	»	»	2 37 1/2
Ըօթին Լաճ	»	»	3 75

Մնացորդաց վերի ցուցակին գիներէն 1/4 մէճիտ պակաս։

Առնամանիներ ի Հարկին 24 ժամէ կը յանձնուին,

Աժնութիւն, դիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ · ԿԱՆԽԻԿ

Սոյն Նշդեղ եկեղեցւոյն Ջեռ դրան մօտ, Ր՝ը 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

Ս. ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԻԵ ԸՆԿԷ

ՍԵՓ ՎԱՃԱՌԱՏՈՒԹԻՒՆ

Միայն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իզմիրի ամէն հասարակութեանց համակրութիւն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քանի դնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ, ինչպէս ցարդ, նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինել թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Ա.չէ – Եօրկէյ կաշնակի փողոցին մեծ քարէ նախ ոտքին։

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

Կէ–Լաւեօ, 0 Պօն–Մարշէյ գլխաւոր փողոց

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Հայ ընթերցասէրներու թէ վերջերս ստացայ հետևեալ գրքերը.

Ֆրէսրիք Մասօն — Նապոլէօն է լէ ճամ
Բէն տը Ն Օլէր — Ֆրանս է Թուսի
Ֆիկառօ Սալօն 1894 — Արմէ Ինիս
Ժանիլ Ֆիկառօ Սալօնի 1894
Բ. Պուրժէ — Քոզմոբօլիս (Գէ Լ Ֆէռ)
Նոր տպագրութիւն պատկերազարդ

ԿԱՏՊԷՆ

ԿԻՍԱՄՄՍԵԱՅ

ԿԳ. ՏԱՐԻ

ԹԻՒ 9 15 ՄԱՅԻՍ 1894

ԳԵՐՄԱՆՔ

Գերմանիա ևս հետզհետէ ազատ փոխանակութեան կ'հակի։ Արդէն ներքին մաքսանոցները բարձած և դրացի տէրութեանց հետ այնպիսի դաշնագրեր հաստատած է, որ իր առևտրական յարաբերութիւններն նոր մղում մ'առած են։ Գերմանիա՝ երբեմն էապէս երկրագործ ազգ մը, այժմ ճարտարութեանց մէջ առաջնակարգ դիրք մը բռնելու կ'աշխատի և իր ապրանքներն ուելի ընտիր ու աժան արտադրելու համար ճարպիկ, գործունի և ճշտապահ գործաւորներու բանակ մը կազմելու ամեն միջոց ի գործ կ'դնէ։ Իր համաքնէքն (գործակցական ընկերութիւնները) որ ժամանակ մ'ընկած էին, 1881 ին հրատարակուած օրինօք նոր քաջալերութիւն կ'ստանան,

որպէս դի մէն մի ճարտարութիւն աւելի զարգանայ, գործատէրներու և գործաւորներու մէջ ծագած վէճերը յարդարուին և ոչ միայն աշակերտներու այլ և առևտրական գործակատարներու հիմնական դաստիարակութիւն մը հայթայթուի։ Այս համքարներն կրնան առևտրական մանաւոր ճիւղի մը վերաբերել, կամ խառն գործակցութեամբ, այսինքն՝ զանազան առուտուրներու միակցութեամբ գործել՝ պահեստի դրամագլուխ կազմելով հիւանդներու համար, արհեստանոցներ և անգործ բանւորներու համար ապաստարաններ հիմնելով։

Նոր Տեղեկագրի մը նայելով՝ գերման գործաւորաց տանէն մէկն համքարի մ'անդամ է, և այդ գործակցականն ընկերութիւններն ոչ այնքան հարաւային որքան հիւսիսային քաղաքներու մէջ աւելի բազմաթիւ են։ Բոլոր Գերմանիոյ մէջ 10,253 համքարներ կան 300 հազարէն աւելի անդամներով, որոյ 7,823 միայն Բրուսիոյ մէջ կը գտնուին։ Այս ընկերութեանց զարգացման համար կեդրոնական յանձնախումբ մը պաշտօն ունի տիպար կանոնադրեր ձրի բաշխել, և մի շատ առևտրական համքարներ զանազան ընկերութիւններ կազմած են իրենց մէջ, ինչպէս Գերման հացագործներու գործակցութիւնն՝ որ 860 քաղաք կ'պարունակէ։

Երկարատև են աշխատանքի ժամերն ի Գերմանիա և մերթ ընդ մերթ պատահած գործադուլները նպատակ ունեցած են կարճեցնել այդ ժամերը։ Շատ տեղ օրը տասն հինգ ժամ կ'աշխատի գործաւորն։ կան որ տասն երկու ժամ կ'գործեն, թէև տասը ժամու և մի քանի արհեստից՝ ինչպէս տպագրական և այլ գործերու մէջ՝ ինը ժամ միայն աշխատելու դրութիւնն օրէ օր հաստատուելիւն կ'գտնէ՝ գործադուլներու չնորհիւ։ Կիրակի և տօն օրերն առ հասարակ անգործ չէին մնար բանւորներն, սակայն՝ ըստ նոր օրինաց, գործատէրները չեն կարող ստիպել մարդիկն որ տօն օրեր աշխատին։ Տեղական կառավարութիւններն յատուկ տօնի օրեր հաստատած են տեղական սովորութեանց և կրօնական դաւանութեանց

համեմատ, այնպէս որ բանուորներն կարող են եկեղեցի յաճախել և եթէ երբէք գործի ատիպողականութեան պատճառաւ այդ արտօնութենէն զրկուին՝ ամիսուան մէջ հանգստեան բաւարարիկ ժամերու իրաւունք ունին։ Ընդհանրապէս գերման բանուոր գործի չմնած պարտաւոր է ունենալ աշխատութեան անցագիր մը, որու մէջ իր անունն, ծննդավայրը նշանակուած են, ինչպէս նաև իր կարողութեան աստիճանը։ Բայց աստի՝ պարտաւոր է, երբ գործէ հրաժարի, իր գործատէրէն ստանալ վկայագրը մը՝ իր ծառայութեան և ուղղութեան յայտարար։

Գերման կառավարութիւնն անտարբեր չէ գտնուած ապրուստի համար աշխատող աղջիկներու և կանանց վիճակին։ Կին մը չէ կարող գործատան մը մէջ աշխատիլ երեկոյին՝ ժամն ութ կէսէն ետք և առաւօտուն՝ ժամն հինգ ու կէսէն առաջ, իսկ երբ նախատօնակ է կանայք պարտին գործէ դադրիլ ժամը հինգ ու կէսին կէս օրէ ետք։ Տասն վեց տարեկան աղջիկ մ՚օրն տասն մէկ ժամէն աւելի չէ կարող աշխատիլ։ Իսկ միջօրէին մէկ ժամ, և եթէ տան հոգն ունին, մէկ ու կէս ժամ՝ հանգիստ վայելելու իրաւունքն ունին։ Ներելի չէ կնկան մը ծնընդաբերութենէ ետք վեց շաբաթ աշխատիլ։ Իսկ ստորերկրեայ աշխատութիւնը բոլորովին արդիլուած է կանանց, ինչպէս նաև դարբնոցներու, ձուլարաններու և ուրիշ տորին կարգի գործարաններու մէջ։

Տասն երեք տարին չլրացուցած և դպրոցէն չարձակուած մանկտին չեն կարող աշխատիլ գործատուններու մէջ։ Տասն և չորս տարեկան տղայք օրը վեց ժամ պարտին դործել։ Իսկ տասն չորս և տասն վեց տարեկաններն տաս ժամ մինչև օրն՝ հանգստեան ժամերն մէկ և մէկ ու կէս լինելով։ Իսկ կիրակի և տօն օրեր բոլորովին արգելած են աշխատութենէ, ինչպէս նաև երբ՝ քահանային կամ հոգուին միջոցաւ՝ կրօնական կրթութեամբ զբաղած են, և մինչև տասն ութ տարին ժամանակ ունին երկրորդական դպրոցներու մէջ իրենց ուսմունքը լրացնել։ Բայց եթէ ոչ գործատուն, մանկտին կարող է աշխատիլ տուն,

ուր օրէնքը չկրնար հասնիլ։ Թուրքիոյ՝ մանկունք՝ երբ դպրոցէն արձակուին, շուտ մը կ՚սկսին խաղալիկներ ներկել և մինչև կէս գիշեր կ՚աշխատին։ Կան գիւղեր, ինչպէս Տաունոսի մէջ, ուր եռամեայ տղեկներ անդուլ կ՚աշխատին ասեղներէ դերձան անցնելու և ցանց ու ձեռնոց չինողներու համար խիժեայ կապեր պատրաստելու։ Տեղ տեղ աւելի ծանր աշխատութեամբ կը տանջուին տղեկներն, ան.քուն մնալով և կիրակի դիշերներ, այնպէս որ ուսուցիչներն սկսած են բողոքել այդ անդթութեան դէմ և պահանջել որ օրինօք արգիլուի սովորութիւն մ՚որ մեծապէս վնասակար է թէ առաղջապահական և թէ կրթական տեսակէտով։

Ե

Գերմանն անձանձիր ընթերցող մ՚է, և ներկայ ժամանակին մէջ երկրի մը մտաւորական վիճակն ոչ այնքան լոկ գրական դասակարգի մը զարգացմանէ կախումն ունի որքան ամբոխին միջին լաւ դաստիարակութիւնէ։

Գերմանական կրթութեան ընտիր դրութիւնն աղգային յատուկ դրոշմ մ՚ունի։ Ցմենուն առջև բայ են նախնական դպրոցներն, և սակայն չունին բնաւ ձրիավարժ դպրոցներու նկարագիրն։ Քաղաքական և կրօնական անկախութեան զգայուն մ՚է իրենց էական հանդամանքներէն մին, որուն յարած է ժողովուրդն, ինչպէս որ յայտնի եղաւ երբ ազգային ժողովին հետ՝ կրթութեան նախարդ պաշտօնեայն՝ Հեր Ֆօն Զեդլից, առաջարկեց որ նախնական դպրոցներն կղերական հսկողութեան յանձնուին։ Ա.յս մասին վէճն շատ երկար տևեց և ուսուցչական մարմնոյն պաշտպանած մի դրութիւն այս է, որ իրենց հսկողութեան ներքև դանուղ ուսանողներն մասնակից դանուին ընկերային դումարուներու, և այս կերպով իրենց բնաւորութիւնը զօրացնեն և աշխարհային իրաց ծանօթութիւն ունենան։ Ա.ս այժմ միայն արտօնութիւն ունին օրը ժամ մը չրջագ այիլ, և ըստ ինքեան

ուսանողներն ժամանակին ոգւոյն անհաղորդ կ'մնան։ Անհատական կ'թուի՝ ամեն գեղեցիկ առենախօսութեանց հակառակ, ազատական ուղղութեամբ բարոքում մը։ Ամենակարեւոր խնդիրն է միօրինակութեան նկարագիր մը տալ դպրոցական արդի դրութեան՝ օրինադրելով որ ամեն դասակարգի տղայք պարտին յաճախել նախնական դպրոցներ՝ մինչեւ իրենց տանեմեայ հասակը։ Ըստ այսմ կարելի պիտի լինէր կազմաւորել միւս դպրոցական հիմնարկութիւնները։

Տղոց դպրոց մը բաւական դպրոց կ'նկատուի երբ իրեւ կամաւոր աշխատելու փափաքող պատանիներու կ'չնորհէ կարեւոր վկայագիրն։ Զինւորական կանոնադիրներու համեմատ՝ զանազան բարձր դպրոցներ կան—երկրորդական դպրոցներ, ժիմնազներ, լիկէօններ, բարձրագոյն ուսումնարաններ, բազմարուեստեան վարժարաններ, արհեստանոցներ եւ։

Փափաքելի չէ դպրոցներու այս մեծ զանազանութիւնը քանի որ այս կերպով անհնար կ'լինի դպրոցական դրութեան մէջ միօրինակութիւն հաստատել, և ծնողք բոլորովին չվոխած կ'մնան երբ խնդիրն իրենց զաւակաց համար յարմարագոյնին ընտրութեան վրայ է։ Դպրոցներու մէջ երկու տարբեր ուղղութիւն կ'երեւի, մին է, ինչպէս երբեմն կարելի էր կոչել, ջերմ հակումն մը բանասիրական ուսմանց, միւսն է՝ ձկտում մը դործնական կեանց։ Մէյոն կեդրոնն է դասական ուսմունքը, միւսինն՝ նոր լեզուները, մաթեմատիքական հրահանգը և ընդհանուր գիտութիւնն։ Բարձրագիր դասակարգը նախընտիր կ'համարի դասական կրթութեան ժիմնազն։ Գերմանիի մէջ ժիմնազներու թիւն անբաւական է։ կայսրն բարձր դէպրոցներու ծրագրին մէջ բարւոքումներ ներմուծեց։ Նա կուզէ որ դոց սորվելիք ամեն առարկաներն ղեղչուին, օրինակի համար, կրօնի և պատմութեան մէջ, օրհներդութիւններն և թուականներն։ Նա հակառակ է նաև դասական ծանր ուսմանց, լատիներէն չարադրութեանց եւ, վասնզի իր միակ փափաքն է որ տղայք քաջ գինուորներ լինին։

Մասնաւոր վարժարաններու տեղ հետզհետէ հանրային կրթարաններ կ'հաստատուին ի Գերմանիա։ Նոյն իսկ կայսրն իր նախնական ուսմունքն այդ կրթարաններու մէջ առած է։ Ազնուատոհմական դասակարգը հակամէտ չէ բոլորովին տնային կրթութեան։ Փոքր քաղաքներու մէջ անգամ հասարակային դպրոցներ կան։ Միայն կալուածատէրները՝ որ քաղաքներէ հեռի կ'բնակին, մանաւոր դաստիարակներու և վարժուհիներու պէտքը կ'զգան։ Հետզհետէ կ'նուազին աղջկանց համար դիշերօթիկ դպրոցներն, ինչպէս նաև վանական դաստիարակութիւնն՝ հռոմէական հասարակութեանց մէջ։ Հարկ է նաև յիշել զինուորական դպրոցներն՝ ուր տասնէն մինչև տասն հինգ տարեկան տղայք կ'ընդունուին, յատկապէս բանակին համար կ'պատրաստուին և գլխաւորապէս զանազան մարմնամարզական խաղերու մէջ կը վարժուին՝ մեծ մասամբ ձրիապէս հրահանգուելով։

Նշանաւոր տարբերութիւն չկայ քաղաքային և գիւղային հաւատալեաց մէջ, թէև շատ կոչտ աւելորդապաշտութիւններ կ'տիրեն գիւղերու մէջ, քանի որ հողագործները ժամանակ չունին բանաւոր ուսմանց հետեւելու։ Բայց աստ՝ զարմանալի է այն հզօր երևակայութիւնն որով գերմանացին կ'պատմէ ուրուականներու վէպեր։ Բարեկիրթ դասակարգն, ինչպէս որ հարկ է, չեն հակառակիր այդ աւելորդապաշտական ղրոյցներու և անոնց տեղ ժողովրդեան յարմար գրականութիւն մը չեն պատրաստեր։ Շատ քիչ են գիւղային մատենադարաններն, թէև ժողովրդեան դաստիարակութիւնն ազգային կարևորագոյն խնդիրներէն մին է ի Գերմանիա։

Գերմանական ընկերութեան մէջ պոռնկութիւն որքին կը տիրէ ընդհանրապէս։ Հարստութեան ազդեցութիւնն համեմատաբար տկար է, սակայն դասակարգական նախապաշարումն միշտ կ'երևի պետութեան մէջ, և պատճառը էապէս զինուորական դասակարգութիւնն է։ Այսպէս կառավարական ամենէ ստորին պաշտօնատարն որու դործն լոկ մեքենական գրագրութիւն մ'է՝ բարձրէն կը

նայի մուտքի բանուորին վրայ՝ որ նիւթապէս իր հաւասարը եւ մտաւորապէս իրմէ շատ գերազանց կրնայ լինիլ։ Ուրաւ է, որ այժմ աւելի դիւրին է ընկերութիւններ յառաջանալ, սակայն կան քանի մը պայմաններ որոց պարտ է հպատակիլ։ Ընկերային բարձրագոյն օրէնքն է պատուոյ պահպանութիւնն, որ եթէ արատ մը կամ ղպտարտութիւն մը կրէ՝ մեռնամարտութեամբ միայն կ'սրբուի։ Գերմանիոյ՝ ըստ առաջնոյն, պաշտող են տիտղոսներուս։ Բրուսիոյ մէջ բանակին միշտ պատուաբեր հիմնարկութիւն մը համարուած է, և այդ պաշտամունքն այժմ կ'տարածուի բոլոր պետութեան մէջ։ Կանայք մանաւանդ հոգի կ'տան տիտղոսի համար և մանակից կ'ուզեն լինիլ իրենց ամուսիններուս տրուած պատիւներուն։ Մեծ քաղաքներուս մէջ շատ բարեկիրթ մարդիկ ընկերութիւն ըսուած չըքնաղին դուռը կ'ապրին՝ անկախ դիրք մը պահելով, մինչդեռ փոքր քաղաքներուս մէջ դժուարին է այդ դիրքը պահել։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Շիքակո, 18 փետր. 1894

Կիւրակէ առաւօտ մը՝ Շիքակոյ ամենացրտին աւուրց մին, թէև ոչ անակնկալ՝ ըստ որում երէկ լրագրաց մէջ օդագուշակ պարոնայց հրատարակութիւնն կարդացած էինք, մալխաձիգ կառքերէ (cable car) մէկն մէջ կը նետուինք Ամերիկացի բարեկամի մը հետ Տիար Մանկասարեանը երթալ լսելու դիտմամբ, որ երբեմն իբր առաջնակարգ քարոզիչ և այժմ իբր հրապարակախօս բարոյական (ethical) նիւթոց վրայ՝ այնքան մեծ համբաւ ստացած է թէ քաղաքիս մէջ և թէ Նոր Ամերիկիս հնագոյն նահանգաց մէջ։ Տիար Մանկասարեան, իսկ տեղական արտասանութեամբ՝ Միստըր Մէնկըսէրեանը, քաղաքիս մէջ քանի մը ամենազեղեցիկ թատրոններէ մէկն մէջ կ'ատենաբանէ ամեն կիւրակէ առաւօտ։

Այցելուք և Բարոյական Ընկերութիւն անդամք կրէնտ Ափրա Հասուզի աթոռներն արդէն իսկ գրաւած էին երբ հասանք։ Թատերարեմն երբեմն այնքան ուշագրաւ և միայնուն՝ վառ և մագնիսական հանգամանօք օժտեալ ժպտուն դիմաց ներկայութիւնդ, այն առաւօտ Ethical Society ի անդամոց և մեզ այցելուացս բոլորովին տարբեր հակապատկեր մի կը ներկայէր։ Հասարակ աթոռ մը, մի սեղան, գրակալ մը եւ լեկտրական ճրագով մը հանդերձ և անիւնը մի դաշնամուր՝ կը կազմէին Թատերարեմի վրայ տեսանելի առարկայից թիւն։

Այն ինչ աթոռոս գրաւած էի՝ սկսայ չորս կողմի վերայ աչքս ժուռ ածել, գաղափար մի կազմելու ներկայ հասարակութեան ազգայնութեան մասին, և իսկոյն նկատեցի սև աչքեր և յօնքեր կոնաձև այտերով՝ որք Հրէական ազգի յատկանիշ կը համարին սովորաբար, և հետևապէս բնաւ չ'մեղադրեցի զայնս յորժամ ձախ կողմիս վրայ միոյն ձեռքը Փըֆ զաւեշտաթերթն և ուրիշի մը ձեռքը նորավէպ մը տեսայ, և աջակողմս չաղակրատ անծեղի նման չափազանց խօսուն և զուարճաբան մի քանի Իսրայէլուհիք ուշադրութիւնս յանկարծ իրենց կողմը ձգեցին։

Մի քանի րոպէներ սահեցան և ահա միջահասակ, սև աչուբ, մրայօն և վայելչադէմ կերպարանաւ մի անձնաւորութիւն եբևցաւ Թատերարեմի վրայ։ Տիար Մանկասարեանն էր։ « Ես այնպէս իմացած էի թէ Հրեայ մ'է », բարեկամս փսփսաց ականջս ի վար։ « Մեծապէս սխալած էք », պատասխանեցի. Տիար Մանկասարեան Հայ մ'է, և իւր ծննդավայրն հազիւ 24 մղոն հեռի իմ ծննդավայրէն Եփրատի արևմտեան ափանց վրայ։

Ասա հարկ կը համարիմ անցուդարձ յիշել, թէ՝ Տիար Մանկասարեան բնիկ Մաշկերցի մ'է, Արաբկերի գիւղերէ մին, Անկէն հազիւ ութը ժամ հեռաւորութեամբ։ Սա իբր բողոքական ճարտար քարոզիչ՝ ատենօք առաքնակարգ մի դիրք գրաւած էր Հայ-Աւետարանական երիցանց տակաւին ցանկին մէջ։ Նոյն նախանձելի դիրքն գրաւած էր ի Ֆիլատէլֆիա մի քանի տարիներ առաջ, ուր բարգաւաճ և ծաղկեալ ժողովական եկեղեցւոյ մը հովիւն էր։ Տարիներ սահեցան և Մանկասարեանի կրօնական գաղափարներն ու տեսութիւնք յանախնկալս բոլորովին մի տարբեր ուղղութիւն ստացան. չգիտեմ զբօսական թէ չեզոքէ-մական կոչել. սակայն սա չափն որոշ էր թէ իրենց նախնական և կամ լաւ ևս բնական (normal) վիճակէն չեղած էին, և անտարակոյս ինչ որ չէ բնական վիճակի մէջ անբնականութեան

(abnormal) սահմանի մէջ պարտիմք համարիլ բժշկական տեսակէտիւ, մի վիճակ որ ծանօթ է մեզ աւելնուս հէ-անդ-ուիթ-ն անուան ներքեւ։

Մոխի ընթերցողաց ծանօթ ըլլալու է այն աքանչելի ատենաբանութիւնն զոր Տիար Մանկաստաբեան արտասանեց տարիներ առաջ ի Ֆիլատելֆիա երբ՝ բոլոր քաղաքականութեան լուծն իր վրայէն թօթափած, և իւր կրօնական խնդրոց վերաբերմամբ ակամայ խուզարկութիւններն յառաջ մղելով հուսկ ուրեմն հասած էր մի այլ և բոլորովին տարբեր միջավայրի անմուկ սահմանին մէջ զոր ինք Միատեսանութիւն (Unitarian) և այլք Անհատատութիւն կը կոչէին։ Իսկ այն գործողական միջոց (process) ընդ որ Տիար Մանկաստաբեան յանձնառու եղած էր անցնիլ տակաւին իւր վերջաւորութեան յանգած չէր։ Մի քանի քայլ ևս առաւ և վերջապէս հասաւ մի վայր զոր ապահովութեան ծովերն կարծելով սկսաւ թհալասոն դոչել Քանոնիօնի հեռաւորդաց հանդոյն, սակայն ինչ որ ինք ծով կը համարէր այլոց համար ամայի և անբեր անապատ մ'էր։ Տիար Մանկաստաբեան այժմ ինքզինքը կը դտնէր «Society of Ethical Culture» ի մէնոլորտին ներքեւ։ Եւ յայնմ հետէ այդ ընկերութեան մէջ ևս սկսած է բարձր դիրք գրաւել իւր գործար և ճարտար ատենաբանութեամբք և բարոյականի մշակման իրր ատատար հանդիսանալով։

«Անոյշ և սրատեսին» երաժշտական հատուածի մոգիչ ազդեցութեան ներքեւէն հազիւ հազ սթափած էինք՝ յորժամ Տիար Մանկաստաբեան դէպի բեմն մօտեցաւ և ծանոյց իւր ատենաբանութեան նիւթն — «Ի՞նչ կրնանք սպասել Նոր Տարիէն»։ Ընթերցաւ մի քանի աւուր պատշաճի հատընտիր քաղուածներ Լմբրոսընի, Լօնկֆելլօի և Թէնըսինի գործերէն, որոնք մասնաւոր ակնարկութիւններ ունէին իւր ընտրած նիւթի վերաբերմամբ։ Պարոն ատենաբանն սահուն և խորհրդալից բանիւք, թէև երբեմնակի օրաբ չշրեաւ, գեղեցկօրէն նկարագրեց ապագայի մասին մեր ունեցած տգիտութիւնն և այդ անտեղեակութեան օգուտն։ «Եթէ Մարթին Լութեր, յարեց ատենաբանն, վ... քաղաքի մէջ կեցած պահուն կարենար կանխատեսել թէ իր Բաբելոնական չարժմանց և գործոց անմիջապէս պիտի յաջորդէր բարեկարգութեան եռանդամեայ պատերազմին ոճիրներն ու արիւնահեղութիւնը, կը կարծէք թէ արդեօք մի նոր էմ (protestantism) պիտի ուզէր հիմնել։ Եւ ե-

թէ Յիսուս, որ խաչեցաւ խաչափայտին վերայ, կարենար կանխատեսել հազարաւոր մարտիրոսաց ի մահ դատապարտուիլն յանուն քրիստոնէութեան, կը կարծէ՞ք թէ մի Նոր Աւետարան պիտի քարոզէր։

«Բոլորովին աչք ու ականջ կտրած էինք» երբ սկսաւ մի աքանչելի ոճով նկարագրել ժամանակի երեք, Անգլոյն, Ներկայի և Ապագայի, բաղադրիչ տարրական մասանց մի նոր պատկերը։ Նախանձաչարժ հմտութիւն ցոյց տուաւ մանաւանդ յորժամ երևակայօրէն սկսաւ պատմութեան էջերն թղթատել և օրինակներ յառաջ բերել հոյակապ բանաստեղծներու գրութիւններէն և միանգամայն ցոյց տալով թէ Անգլիական և Ամերիկեան գրականութիւնն իւր տրամադրութեան ներքև ունէր ըստ մեծի մասին։

«Պատմութիւնն, ակնարկելով ըսաւ, նման է մի տուփի յորմէ կրնանք քաղել և դուրս բերել ինչ որ կամիմք։ Եթէ կը փափաքիս ապացուցանել թէ աշխարհ լաւագոյն է այժմ քան որ էր դարեր առաջ, չատ դիւրաւ կրնաս յաջողիլ և միակ բանըն որ պէտք է ընել կը կայանայ ձեռքդ պատմութեան տուփին մէջ մխելու և անտի դուրս բերելու հարկաւոր իրողութիւններ, որոյմով կրնայ չատ դիւրին կերպիւ ապացուցուիլ ինչ որ մտադրած էիր ընել։ Իսկ եթէ կուզես ապացուցանել թէ աշխարհն վատթարագոյն է այսօր քան որ էր յանցելումն, դարձեալ կրնաս յաջողիլ՝ տուփին մէջէն քաշելով այնպիսի իրողութիւններ որք կը հաստատեն զնոյն։

Պարոն առենարանն իւր նիւթն աւելի մօտէն չօչափելով ըսաւ, «կրնանք յուսալ թէ մարդկութիւնն յառաջիկայ տարւոյ մէջ մի փոքր քայլ ևս պիտի առնու դէպի բարին, և չարէն մի քիչ ևս պիտի հեռացնէ իւր քայլերն։ Գիտոյ և բարեսիրական զգացմունք քչիկ մ'ևս պիտի յառաջ խաղան իրենց զարգացման ասպարիզին մէջ։»

Ակնարկելով Նաֆկրծեան Համագումար ժողովն որ քաղաքիս մէջ տեղի ունեցաւ այս անցեալ ամրան միջոցին յորժամ համայն կրօնից ներկայացուցիչք պաշտպանեցին իրենց կրօնները, «Ձեմ կարծեր» ըսաւ Տիար Մանկասարեան, և ոչ ալ կը յուսամ ինչ որ չատեր կ'ակնկալեն Կրօնից Համագումար ժողովէն, թէ 1894ն պիտի լինի համաչխարհային կրօնական համերաշխութեան ոսկեղինիկ թուականն ... թէ կաթոլիկ արքեպիսկոպոսն Հրէից րաբունապետն պիտի հրաւիրէ ի բեմ իւր հօտին

քարոզելու համար . . . այլ սակայն կը յուսամ արդարև, թէ՝ այդ անմոռանալի ժողովոյն չնորհիւ մարդիկ պիտի սկսին տարբեր աչօք նայիլ իրենց ղրացեաց վրայ։ Կրօնական ազատամտութեան գաղափարն առաւել ևս սերտիւ պիտի ամրանայ, և այլանկրօնք հեշտ աչօք պիտի նկատեն զիրար քանի որ պարզուեցաւ թէ ամէն կրօնի մէջ կայ ճշմարտութեան մի կայծ։ «Կը յուսամ դարձեալ թէ՝ յառաջիկայ տարւոյն մէջ եղբայրութեան և սիրոյ զգացումներ մի քիչ ևս պիտի մշակուին, և այսպիսեաւ համաչխարհային կրօնական միացումն և կամ եղբայրութիւնն դէպ իրագործումն մի փոքրիկ քայլ ևս առած պիտի լինի։ Բարոյականի մշակումն ևս յառաջ պիտի մղուի չափով ինչ։»

Երկրին ներկայ տագնապալից և աղքատներու թշուառ վիճակին նկարագրելով յարեց, «եթէ ողորմութիւն խնդրելու պատրաստ միայն մի քանի անձինք ունենայինք՝ հացի համար աղաղակ բարձող մանկտեաց թիւն սակաւաթիւ պիտի լինէր, եւ եթէ ունեցած լինէինք սակաւաթիւ պալատներ դատարկ սենեկօք լի, յայնժամ եւեթ պիտի կարենայինք ունենալ սակաւաթիւ աղտոտ հիւղակք ուր չորս և հինգ ընտանիք կը խառնին միասնարար թշուառութեան և գարշութեան անհրապոյր ցուրտ գոգին մէջ։

Ունկնդիր հասարակութիւնն բուռն ջանքեր կը թափէր այս պահուն զսպելու ծափահարական մղումն որ այնքան ըզգալի եղած էր մանաւանդ յորժամ Տիար Մանկասարեան ըսկըսաւ ընկերական ընթացիկ խնդիրներն չօշափել իւր յատուկ հրապուրիչ ոճով։

Իւր խօսքերն գործնականի վերածելով ըսաւ — «Մեզ պէտք եղածն չէ այլ ինչ բայց եթէ առաւել անյոգնաբեղուռիւն, նուազ ծանոթութիւն և անյոռնամոռացութիւն։» Եւ երբ ունկնդրաց մտածութիւնն առաջնորդեց դէպ յիւսկիւտար, երևակայութեան թեւերով նկարագրելու Անգլիական Գերեզմանատունը յորում նռնենց և լալկան ուռիներու խաղաղ ստուերաց ներքև կը հանգչի Օր. Նայթինկէյլի, անյոգնաբեղուռիեան լաւագոյն և օրինակելի տիպարներէ միոյն մարմինն, որ Խրիմու յիշատակելի պատերազմին ժէ֊ վիրաւորներն հոգալու և կեանքն այլոց ազատելու համար, ինչպէս սովոր էինք բացատրել երբ պզտիկ տղայք էինք մայրենի ծածկի ներքև, տալու մէջ կը դտնէր միակ երջանկութիւնը։ Եւ յորժամ կը նկարագրէր այդ անվեհեր և արի

Անկուհոյն վարքն ու կեանքը, և ի մանաւորի Գերեզմանատունն յիւսկիւտար, յայնժամ սկսայ ինքզինքս ի հայրենիս համարել որովհետև ոչ ոք այնքան ճշտիւ կրնար հետևիլ Տիար Մանկասարեանի նկարագրութեան՝ որքան իւր թիւրքիացի ունկնդիրն։

Յօդուտ այլոց անձնուիրութեան հարկին վրայ ծանրանալով՝ վերջ տուաւ իւր կարի դրաւիչ առեղնախօսութեան և վայելուչ ու դերասանական խոնարհութեամբ մը քաշուեցաւ իւր աթոռն՝ մինչ ծափահարութիւնք հակառակ առեղնարանի կրկնակի խնդրանաց լսելի եղան իրր գործնական ապացոյց Հայ հանճարոյն հարատևական կարողութեան առ ի դնահատութիւն։

(Մնացածն յաջորդ թուով)

Ն. Ճ. ԴԱՒԱԹԵԱՆ

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ի

Հին դարերու ժամասէր բարքը՝ ինչպէս կը տեսնուի, տեւած էր մինչև պատանեկութեան ժամանակները և կ'արտայայտուէր զանազան ձևերու տակ։ Բնական էր որ երիտասարդութիւնն տիրող բարուց ապրեցութեան տակ գտնուէր ուշադրկի։ Տան — տան ու հինգ և աւելի իսկ տարիք ունեցող մանուկներ ու պատանիներ մանաւանդ խորանները ձևացնելով տուներու մէջ «ժամ խաղալու» խելօք ու անմեղունակ անցժամով կը պարապէին։ Պեղտաւոր երիտասարդներ իսկ՝ որոց մտաւոր զարգացումը՝ հիներու պատմածին նայելով՝ մեծ անգամանութիւն մը կը կրէ եղեր, այս անմեղուկ դրօսանքը չէին արհամարհեր աւելի հին ժամանակներ, դրօսանք՝ որու հետքն իսկ չտեսնուիր այսօր՝ նոյն իսկ ամենաւիրաքր մանկիկներու կողմէ։ «Ժամ խաղալ», ո՞վ այսօր մոքէն կ'անցընէ, ո՞վ քիթը կը փչէ այսպիսի տղայական անհամ պարապումի մը։ «Ժամ խաղալ»ը ծիծաղ պիտի չարժէր արդի նորահաս սերունդի մէջ՝ որ մատաղ հասակէ վիճակակից կ'ըլլայ այն կրօնական անտարբերութեան՝ որու դայթակղելի օրինակը կուտան Հայք և որ մանաւանդ պատճառ կամ այնպէս կարծուած մասին նշանարանն եղած ըլլալ կը թուի այսօր . . . ։

կը յիշեմ թէ մեր դեռեզերքի տան մէջ ևս « ժամ կը խաղացուէր »։ Նուպար և Սահակեան եղբայրներս դեղեցիկ խրան մը կազմած էին՝ որու ճիշտ մէջ տեղը կը գտնուէր դեղադիմ Աստուածածին մը՝ հօրենական ժառանգութիւն՝ որ ցայսօր կը մնայ մեր տան մէջ։ Որքան դեղանի՝ այնքան զօրաւոր և հրաշագործ Աստուածածին մ'որ չարունակ կը փնտուէր և մինչև ցայսօր կը փնտուի երբեմն դրացի ու նոյն իսկ հեռաւոր հիւանդներու տուներէ։ Գարեգին Բարազեան՝ որու բարեպաշտութիւնն անսասան մնացած է միշտ — անդրիական կրօնասէր բարուց հետ բազմամեայ չփման հաւանական հետևանք— կուզար սակայ մեր տունն « ժամ խաղալու » եղբարցս հետ՝ որոնց կապուած էր բարեկամութեամբ։ Խորանի զարդ ու կազմածն դնուած էր Պ. Սարգիս Պալասանեանէ։ Իզմիրի ապագայ դիւանապետն ևս՝ հին ուսումնականներու տիպար մը՝ քաջ հայկաբան մ'որ իր բոլոր ուշադրութիւնը կրօնական կամ բարեպաշտական դիրքերու նուիրած է, և որ ցայսօր զերազանցապէս կը հետաքրքրուի եկեղեցական, աստուածարանական և բնաղանցական հարցերով, զարմանալի չէր որ « ժամ խաղար » իր պատանեկութեան մէջ, ինչ որ իզուրծ կը դնէր աւելի լրջօրէն և աւելի կատարեալ ձևացումով, այսինքն զդեստաւորեալ և սաղաւարտ իշլուխ . . . ։

Ժամանակներն մրքան փոխուած են։ Աստուածու տունն իսկ յաճախողք կը պակսին հիմայ, թէև հին Իզմիրցին չափէն աւելի մեծ եկեղեցի մը կանգնած է միլիոններ ծախսելով և ահագին պարտքերու տակ հեծելով. անխոհեմ և անտնտեսագէտ բարեպաշտութիւն՝ որու ծանր հետևանքը կը կրենք մինչև ցայսօր, այսինքն Սբ. Սահակեանոսի հիմնադրութենէ չիսուն տարի ետք։ Ազգային անտուկը մեծագումար տոկոսներ կը վճարէ անդադար և այս պատճառով դատարկ կը մնայ միշտ՝ հակառակ ճոխ հասոյթներու՝ զոր հին տոհմասիրութիւնը կամ ժամասիրութիւնը — հետզհետէ անհետացող առաքինութիւնք — թողած է իրր յիշատակ և նուէր։ Զատկի և Ծնունդի օրեր հապիւ կը լեցուի Սբ. Սահակեանոսի տունն՝ իր ընդարձակութեանը մէջ գրեթէ միշտ ամայի ու թափուր։ Հիմա լուսաւորուած ենք և կ'արհամարհենք ժամ յաճախելու միամիտ և հինօրինաց սովորութիւնը, թէև ամենէ լուսաւորեալ ազգերն իսկ՝ որոնց դժբաղդաբար յոռի կողմերուն դիտենք միայն հետևիլ, կրօնական այսպիսի բացարձակ անտարբերութեան մ'օրինակը չեն

տար մեզի ժամ երթալու նորոյթն անցած է. հիմա դպչիս և պարահանդէս կը վազենք, բարեպաշտ և օգտակար հանդէսներու տեղ՝ կը նախընտրենք աշխարհիկ և զուարճութեան հանդէսներ՝ որք մեր բոլոր հոգեկան վայելքներն ու երանութիւնը կը կազմեն: Ինչ որ մեծ բարակութիւն կը յայտնէ անշուշտ և անժխտելի զարգացում . . . : *

---

* Մեր ազնիւ բարեկամ Գարեգին Խաթագեանի՝ անցեալ ամիս Մանչեսթէռէ առ մեզ ուղղած մէկ նամակը կը պարունակէ հատուած մ'ուշադրութեան արժանի, եւ որ բաղդատութեան բազմաթիւ կէտեր կը ներկայէ մեր եւ Անգլիացւոց բարուց ու վարուց մասին: Աւելորդ չդիտիր մեզ արտագրել այդ տողերը՝ ներում խնդրելով արգոյ նամակագրէն որ առանց իր արտօնութիւնն ըստանալու ի լոյս կ'ընծայենք զանոնք: Դիտել պէտք է թէ Անգլիացի մեծ ազգն ինչպէս անսասան կը մնայ իր հին բարի շաւիղներու մէջ, մինչդեռ մենք՝ լուսաւորութեան չեմնորդս՝ խմաստութիւն եւ փառք կը համարինք ամեն օր հեռանալ անոնցմէ տաժելով մեր առհասին նկարագիրն ու առաքինութիւնները եւ բարոյական անփառակից հայհոյմամբ տխուր տեսարանն ընծայելով դիտող աչքերու:

« Հոս չկան, կ'ըսէ Մանչեսթեռի նամակը, այն Ի-հվ-վէլլ՝ զոր ունիմ իմմիր. հոս չգիտեն այսպիսի բան: Ամեն ոք գործը լմնցնելէ ետքը, ընտանեաց ծոցը կը վազէ եւ հոն կ'գտնէ իր երջանկութիւնը: Տեսնելու բան մէ հոս կիւրակէն. գիտես այս ազգը շատ կրօնասէր է, ուստի կիւրակէ առաջ բնականապէս ամեն գործ դադրած է, ամեն ոք եկեղեցի կը վազէ գիրքը ձեռքը. արէ եւ կանայք, օրիորդք, երիտասարդք, մանուկներ ամենքը պարկեշտօրէն լրիվ մնջիկ եկեղեցի կ'երթան: Մեր տունէն ոչ հեռու մատուռ մի կը գտնուի՝ ուր կ'երթանք երբեմն: Ըմանչելի բարոգիչ մը կայ հոն՝ որու խօսքերը սրտիդ կ'ազդեն ուղղակի: Մատուռը միշտ լի է, ամեն նստարան գրաւուած է, եւ ամեն ոք ժամանակին կուգայ (կէս ժամ ետքը չգար քաջ հաւնոյս — հոս դիտել կուտանք մեր բարեկամին թէ ժամերգութիւնք որք երկար չեն, միշտ ժամուն կ'սկսին եւ որոշեալ ժամանակին կը լմնցնան Էրոպացւոց մէջ:) Դպա կ'սկսին երգել երգեհոնով, (մեր եկեղեցական նշխարութիւնք ա'լ ժամանակ է որ ժամերգութիւնները բարեկարգեն եւ մասնեն երգեհոնի գործածութիւնը մոցնելու փոխանակ ծնծղայի: Երգեհոնը հանդիսաւոր վեհութիւն մը կուտայ փառաբանութեանց եւ իբր ժամանակի պահանջում մը կրնայ նկատուիլ): Երեւակայէ՛ երկու հազար հոգի (երկո՛ւ հազար հոգի) ամենքն ոտի վրայ կանգնած՝ որք կ'երգեն միաձայն: Շատ արտառոյց տեսարան մ'է այս: Ձեռայ երէցը կ'տղօթէ, չեռայ նորէն կ'երգեն: Առաւօտաշնչէն գրեթէ մը կը կարդայ, նորէն կ'տղօթէ, եւ վերջապէս կ'սկսի իր քարոզը, եւ ի՛նչպէս սիրտդ կը բաշէ, երեւակայութիւնդ կը կաշկանդէ: Չես կրնար մոխիկ չընել զայն: Կիւրակէ իրիկուն նա ամեն ոք գոյզ գոյզ եկեղեցի կ'երթան նիշդ այն ժամուն՝ որ իմմիր ամէն ոք, ամէն ընտանիք զբօսարան, արնարան կը վազէ: Ի՜նչ տարբերութիւն . . . »

(Այո՛, մե՜ծ տարբերութիւն: Մենք հոս մեր բոլոր ուրախութիւնը, բոլոր վայելումը եւ բոլոր միխթարութիւնը հարսի սրբազանութեանը մէջ կը փնտռենք՝ ուր ամեն օր չենք վարանիր պարսպել մեր բաակը: Այդ բաակը՝ բարի կամ ուսումնասիրական նպա-

Ո՞ր քրիստոնեայ — և քաղաքակրթեալ — ազգի մէջ կը հարցուննենք տեսնուած է կամ կը տեսնուի կրօնական պարտուց այսքան դատապարտելի անփութութիւն։ Մեր դրացի յոյն ազգը՝ որու գովելի օրինակներէն և ոչ մէկէն կ'օգտուինք ըղծբաղդարար, իր բարեպաշտ սովորութիւնները պահած է անեղծ, թէև մեզմէ շատ աւելի զարգացած վիճակ մ'ունենայ անժխտելի կերպիւ։ Տահարը միութեան սուրբ կեդրոն մ'է որ համասեռ հաւատացեալներու կը յիշեցնէ իրենց հասարակաց ծագումը, կրօնային և եղբայրական համերաշխութեան զգացումները կ'արթնցնէ, և տոհմային ու անհատական առաքինութեանց հուրն անչէջ կը պահէ անոնց բարեպաշտ և բարեխառնած սրտերու մէջ։ Իր սուրբ կարգին անգիտակ կղեր մ'որու վարին ու ազդեցութիւնն երթալով կը պակսի, և որ՝ կարի հաղուագիւտ բացառութեամբ՝ իր բուն չահերն իսկ հեռի է հասկնալէ, անկարող կը հանդիսանայ բժշկելու հետզհետէ արմատացող կրօնական ցրտութիւնը։ Այդ ցրտութիւնը հետամուտ չէ բնաւ ճշմարտութիւնը փնտռելու, և իրեն հիմ ու ազբիւր ունի դատապարտելի անտարբերութիւն մը։ Մեր նոր սերունդն՝ որ խորանէն կը հեռանայ ամէն օր, իր մտքի հարևանցի տարակոյսները (եթէ երբէք ունի տարակոյսներ և զբաղած է անոնցմով), փարատելու համար կրօնագիտական կամ իմաստասիրական հետազօտութիւններ ընելու հարկ իսկ չտեսներ (ենթադրելով որ կարող ըլլայ ատոր), կրօնքի և հաւատալեաց մասին իր ներքին համոզումը վերջնապէս կազմելու համար։ Առանց քննութեան թերահաւատ ըլլալ իրեն փառք և արժանիք կը սեպէ, թէև այդ վիճակը հոգեկան ու բարոյական թմրութիւն կը յայտնէ միայն՝ ուր բան և լրջութիւն որ և է մաս չունի։ Մեր դարավերջին երիտասարդութիւնը՝ զէթ անոր մէկ մեծ մասը՝ ոչ եկեղեցիով կ'զբաղի, ո՛չ տոհմային կամ ուսումնասիրական նիւթերէ կը հետաքրքրուի և ոչ մտքի յաջորդական մշակութեամբ ինքզինք զարգացնելու կը նկրտի։ Օտար թերթերը կը նախընտրէ հայ թերթերէն երբ կարդալու մասէ մ'զգայ, օտարի լեզուն թոթովելը կը նախընտրէ իր լեզուն խօսելէ՝ զոր լաւ չգիտեր և չգիտնալը թերևս չէ մկ է—

տակի համար ստիպ կը մերժենք բնական՝ երէ ծայրը զուարճութեան խայծ չգտնուի։ Զուարճութիւն. ահա՛ մեր փնտռածը, ահա մեր պաշտածը։ Ինչ դատարկութիւն սրտի ու մտքի . . . .)

ական պայմանը կը համարի։ Ատոր փոխարէն զուարճութեանց լեզուն կը հասկնայ դերազանցապէս, և՞ զայն կը խօսի նշանակելի ձեռնհասութեամբ։ Զուարճութիւն և զբօսանք, ատո՛նք են կարծես իր կեանքի նպատակը՝ որմէ անդին բան մը չկայ բովանդակ աիեղերքի մէջ։ Ատոնց կը նուիրէ իր նիւթական և ֆիզիքական բոլոր ոյժերը՝ զոր հանրական օգտի և ընտանիքի բարեկեցութեան պէտք էր գործածել, և այդպէս վարուելը բարակութիւն և լուսաւորութիւն կը կարծէ։ Ընտանիք և բարոյական պարտականութիւններ իրենց նշանակութիւնը կարծես թէ կորսուած են այդ այլասերած սերունդի առջև՝ որ բարի չափովէ կը հեռանայ ամէն օր . . . ։

Մեր նախնիք խնայութեամբ ապրելու և ապագայի համար ստակ պահելու խոհեմ ու գովելի ընթացքը կը ցուցնէին խնայութիւն. ի՞նչ պարապ գաղափար։ Ո՞վ կը մտածէ այսօր խնայութեան վրայ։ Եղայր, անհեռատես և օրն օրին կեանք մը ստուգապէս մեր դարավերջիկ երիտասարդութեան նշանաբանն եղած ըլլալ կը թուի։ Սէրը մերժուած է իր սրտէ. ամուսնութիւնը գործ և առևտրական սակարկութիւն մ՚եղած է շատերու համար, միջոց մ՚որով ի գին երջանկութեան նիւթական անկայուն ու վիճակ մը պիտի գարմանուի և կարելի պիտի ըլլայ շարունակել պերճ կեանք մ՚որ մ՚ինքան կը յարմարի անխորհուրդ անփութութեան և որ սակայն պինք ի վերջոյ կործանելու կը ծառայէ միայն . . . ։

Եթէ իրօք ասոնք պիտի ըլլան քու պատուհերդ, քու ապրեցութեանդ հետևանքը, ո՛ կարծեցեալ լուսաւորութիւն, աւելի լաւ է որ պակաս ըլլաս մեր դլխէ։ Ինչ որ զարդացում կը համարիս, ինչ որ յառաջդիմութիւն կ՚անուանես, ինչ որ գործնական կենցաղագիտութիւն կը կարծես, ո՛ երիտասարդութիւն, (յարգելի բացառութիւններու չէ՛ մեր խօսքը), մենք կ՚անուանենք թեթևամտութիւն, անխոհեմութիւն և լուրջ ու հիմնաւոր սկզբունքներու ցաւալի պակասութիւն։ Եթէ «ծառ ի պտղոյ անտի իւրմէ ճանաչի», ըսէ՛ ինձ, ո՛ նորահաս սերունդ, ի՞նչ է քու պատուդ, ի՞նչ է քու նշանաբանդ, ո՞րն է քու գովելի կողմդ, և ո՞ր գործովդ պէտք է ճանչնալ ու դատել զքեզ. մի՞ չատ յոռի նիշերու քով ո՞րն է բարի նիշդ, կը համարձակիմ հարցնել՝ միակ բարի նիշդ . . . ։ Խօսէ՛։

(Շարունակելի) ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԽՈՒՆԿԸ

առ Ա. Ե. Ա.

Առաւօտուն պահ միջը կանուխ վազեմ իմ եկեղեցին,
Եւ միջը աղօթից մրմունջներն լսեմ աւազերեցին,
Ոտրտապտոյտ ծուխ մ'սպիտակ եւ կնդրկաւետ,
Բարձրանայ ի վեր, միջէն կամարն ի վեր ի գմբէր.
Խունկն է մարդկային
Երկուղած սրտին։

Շաբաթ երեկոյ երբ գնամ ի տուն, մօտ իմ մայրիկին,
Նա անկիւն մը քաշուած, նստած կ'աղօթ համրիչ ի ձեռին,
Եւ վառարանին ծուխ մը շատ բանմը, այլ մեղմ ու անուշ,
Սենեկին չորս կողմը, լոյսն իսկ ճրագին պատէ ի մշուշ.
Խունկն է ծերուկին
Հոգւոյն տխրագին։

Երբ կոյսն առ կուսին դիմ առ դիմ կեցած ոխտեն իրարու,
Կայ մնայ ցʼկեանս, տէր՝ հաւատարիմ՝ խոնարհ եւ հլու,
Հալուն լանկաբոյր, ծառացայ յերկին, ոյոր ու մոյոր,
Նուիրագործել սիրոյ այդ ոխտն, վեհ խորհրդաւոր.
Խունկն է երկնային
Հարսին ու փեսին։

Եւ միւջ կը տեսնես, տխուր՝ անարկու մի սեաւ դագաղ,
Որ ամվոփուած կայ մարմինն անկեղգան, սիրելւոյդ աւաղ,
Խունկն բուրվառին, մի ծուխ արտադրի՝ ծուխ մահաստուեր,
Ոյր միջէն հոգին քո սիրականին բոլի դեպ ի վեր.
Մահուն խունկն է այն
Դեանքին սեւ՝ ուրայն։

21 Յունվար 1894
Փարիզ–Քլոյ

Ց. Ս. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԿԱԹԻ ՎՐԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Կաթը կիներու և զանազան կենդանիներու ծիծերէն վազած հեղուկն է՝ որ նորածին մանուկին և ձագուկներուն առաջին սնունդը կը կազմէ։ Այս հեղուկը յղութեան մէջ կ'սկսի գոյանալ, այս միջոցին նուազ ճերմակ և նուազ սննդարար է որուն պալ (colostrum) անունը կուտան, ծննդաբերութենէ վերջը կ'սկսի խտանալ և չատնալ։

Մի քանի բացառիկ պարագաներու մէջ նորածին մանուկներուն, դեռատի կոյս աղջիկներու ծիծերուն մէջ կաթ տեսնուած է, չունը իր գրգռման միջոցին ծիծին մէջ կաթ կունենայ, վերջապէս բնախօսական հեղինակութիւններու մէջ էրիկ մարդերու ծիծերուն մէջ կաթի պատահուած ըլլալը յիշատակուած է։

Կաթին ֆիզիքական յատկութիւնը. — *Կաթը ջուրէն քիչ մը ծանր ըլլալով գոյնը ճերմակ կամ կապուտիկ ճերմակ և անթափանցիկ է, իրեն յատուկ հոտով, և չաքարային համեմի համ ունի։ Կաթը մանրադիտակով քննելով իր ջրային մասին մէջ կրնէ գնդիկներ անունով լուղոտ մասը հատիկներ կը տեսնուին, որք միայնուն կեդրոնով թխագոյն չրջանակով գնդաձև դեղնագոյն գնդակներ են, սոսկ ջրային մասէն այս ինքն շճուկէն աւելի թեթեւ են, երբ կաթը ժամանակ մ'անշարժ ձգուի այս գնդակները երեսը ելլելով վերը կը կազմեն որուն գաւառացիք մանկ կ'ըսեն. եթէ այս մասը զարնուի բոլոր գնդակները մեկտեղ հաւաքուելով կարագ կը գոյանայ։*

Կաթին էվգիական յատկութիւնը. — *Կաթը՝ բաղադրեալ է բնաստիտային նիւթերէ, կաթնաշաքարէ (sucre de lait), կարագի գնդակներէ և զանազան աղերէ, ուրեմն կաթը հեղուկ և պոպոռան մասերէ կը բաղկանայ։*

Հեղուկ մասը ջուրէ և հալած նիւթերէ կը բաղկանայ, ջուրը կաթին ամենէն մեծ մասը կը կազմէ, իսկ հալած նիւթերն կաթնաշաքարին ֆոսֆորաննաւոր նիւթերն են որ նաև կը կոչուին բնակաթ, բնատպնիր, բնասպիտ հալած անֆոսֆորաննաւոր նիւթերն են կիրի, սուսի, մանիէդիլ, երկաթի ֆոսֆաթները, աղ և ածխային թթուի բորակածնի, թթուածնի կաղերը։

Կաթին հաստատուն մասը էջային ընդհանրէ կազմուած է; այս գնդակները կը բաղկանան բնակարագէ (margarine), բնաճարպէ (stéarine) բնաիւղէ (oléine) և բնակոզէ (butyrine)։

Հետեւեալ ցուցակը կաթին բաղադրութեանց վրայ ստոյգ գաղափար մը կուտայ։

1000 մաս կաթին նիւթերը	կին	կով	Այծ	Էշ	Ջի	Ուխտ	Շուն
Խտութիւն	1032,67	1033,38	1033,53	1034,12	1033,74	1040,98	1041,62
Ջուր	889,08	845,66	873,26	890,12	904,30	832,32	772,60
Հասատուն նիւթեր	110,92	154,35	126,74	109,88	95,70	167,68	227,40
Բնապանիր	39,24	33,11	24,85	35,65	33,35	69,78	116,88
Կարագ	26,66	63,35	44,02	18,53	24,36	51,31	87,95
Կաթնաշաքար	43,64	42,47	38,33	50,46	32,76	39,43	15,29
Բնասպիտ	39,24	8,13	13,24	35,65	33,35	69,78	116,88
Անդրծարանաւոր աղեր	1,38	6,13	6,23	5,24	5,23	7,16	7,80

Կան ուրիշ յուցակներ որոնց քննութեանց արդիւնքներուն մանրամասնութեանց մէջ տարբերութիւններ կը նշմարուին, սակայն ընդհանուր կերպով կրնանք ըսել թէ կնոջ, էշի և ձիու կաթին միջև մեծ նմանութիւն մըկայ, այս երեք կաթերը ընդհանրապէս կոչուին, վասնզի երեքն ալ շատ մեծ քանակ մը կը պարունակեն, իր բովանդակած նիւթերով կնոջ կաթին աւելին կը պարունակէ, կովու, այծի և ոչխարի կաթերը աւելի քիչ շատ ունին և հետևաբար բնասպիտային նիւթերու, կարագի և աղերու կողմէ աւելի հարուստ են։ Շան կաթը ամենէն թանձրէ, իր պարունակած բնասպիտը, բնապանիրը և կարագը կնոջ կաթինկրկնապատիկը են է, մինչդեռ շաքարը կնոջ կաթի շաքարին կէսը է։

Ինչին նպաստած կրնը ի՞նչ կըլլայ։ — Ինքնին երեսի վրայ թողուած կաթը փոփոխութիւն կը կրէ, կաթին ամենաթեթև գընդակները երեսը ելլելով սերը կը կազմեն, ասոր տակը կը մնայ կապուտակ ճերմակ ջրային մասը։ Եթէ կաթը տաքցուած է կամ շաքարը կրնայ ընդունել փոխուելով բնանեարդը կը խտացընէ որով ճաշուընը կը կազմուի, այն ատեն երեք խառ կը նշմարուի, ամենուն վրան սերը, անոր տակը ճաշուընը կամ պանիրը և աւելի տակը շիճուկը (petit-lait) որ մածունին պարզ ջուրն է։ Կաթը որչափ շատ տաքցած ըլլայ այնքան շուտ կը խտանայ և մածուն կը դառնայ, քիչ տաքցած կաթը ուշ կը խտանայ և կաթնային թթուի խմորումը ուշ տեղի կունենայ։ Կաթը կրակի վրայ տաքցնելով երեսը բնասպիրի խառ մը կը կազմուի

որ պաղեցնելով կը խտանայ և պանիրը կը կազմէ։ Եւրոպա պանիրը այսպէս կը պատրաստեն, թէև քիչ կուտայ բայց ազնիւ տեսակէ կըլլայ, մինչդեռ մեր դաւառացիները կաթը առանց տաքցնելու միայն մանաւանդ խմոր մը խառնելով պանիր կը շինեն որ այնչափ լաւ չըլլար, թէև այս կերպով կաթէն աւելի շատ պանիր կ'ստացուի։

Կնոջ և զանազան կենդանիներու գոյից կարին չափը։ — Կնոջ մը 24 ժամուան մէջ տուած կաթին միջին չափն է 1200 էն 1400 կրամ, այս չափը 600 կրամ ալ կրնայ իջնալ, կամնուու կով մը օրական 10 — 12 — 13 — 22 և մինչև 30 լիտր կաթ կրնայ տալ, էշը երեք լիտրէն աւելի և այծը մէկ ու կէս լիտր կուտայ։

Կարին թանախուխեամբ և չոգխուխեամբ կրած պրբերուխիւնները և ֆոխխուխիւնները։ — Կաթին յատկութիւնը և մանաւանդ քանակութիւնը հետևեալ զանազան պատճառներով կը փոփոխի և կը տարբերի։

1. — Անհնական ազգեցուխիւն։ — Անձնական առանձնայատկութիւնը յայտնի է որ կաթին չափին և բաղադրութեան վրայ մեծ ազդեցութիւն մը ունի, մինչդեռ անուանդը առնող կովերու կաթը իրարմէ շատ տարբեր կ'ըլլայ, որը շատ կուտայ, որը քիչ, ոմանց կաթին կարագը աւելնալով բնասպիտային նիւթերը կը քիչնան և ոմանց ալ ասոր հակառակը։

2. — Ցեղի ազդեցուխիւն։ — Մարդկային զանազան ցեղի սատկանող կիներու կաթերուն իրարմէ ունեցած տարբերութիւնը ապացուցանել դիւրին չէ, մինչդեռ կենդանիներու համար խնդիրը հաստատապէս լուսարանուած կ'ըլլայ երբ յիշենք թէ հարաւային Ամերիկայի կէս ընտանի կովերուն և այծերուն կաթերը մեր երկիրներուն ընտանի կովերուն և այծերուն կաթէն քիչ են։

3. — Կազմուխիւն ազդեցուխիւնը։ — Վէրնուա և Պէքէրել ըստուգած են թէ ընդհանրապէս թխամորթ, մկնային, դեղադէմ, չափաւոր գէր և ոյժի արտաքին բոլոր երևոյթներով լի կիներու կաթերը հակառակ կազմ ունեցող կիներու կաթերէն քիչ հաստատուն նիւթեր կը պարունակեն։ Ժողովրդեան մէջ ընդհանրապէս յարգուած պաշտօնեայ մ'է թէ խարտիչահեր կիներու կաթը թխահեր կիներու կաթէն քիչ է, սակայն բազմաթիւ պիտուններ խարտիչահեր կիներու կաթին մէջ աւելի հաստատուն նիւթեր գտած են, մէկ քանի բժիշկներ, մանաւանդ Տօքթ. Տօնէի կարծիքով չէկ կիները թուխ և խարտեաշ կիներէն վար տանուու կ'ըլլան, ըստ Միլն-Էտուարի պզտիկ կովերը մեծերէն քիչ կաթ կուտան։

4. — Սիճին ծաւալն ազդեցուխիւնը։ — Ըստ Թարնիէի և Շանթրէօյի ծիծին ծաւալը կաթին բաղադրութեան վրայ քիչ ազդեցու թիւն կ'ընէ, մինչդեռ քանակութեանը վրայ մեծապէս կը ազդէ, խոշոր ծիծերով կիները աւելի շատ կաթ կուտան, այսու հանդերձ փոքր ծիծերով տանուներ կան որ շատ կաթ կուտան,

5. — Տարէին և յաւելեալ ազդեցութիւնը. — Նորատի կնոջ մը կաթը ծերացած կնոջ կաթէն աւելի առատ կ'ըլլայ, նաև բազմածին կնոջ կաթը միածին կնոջ կաթէն աւելի չատ և կարագով ու շաքարով աւելի հարուստ կ'ըլլայ։

6. — Նոր յղութեան մը ազդեցութիւնը. — Դիեցնող կինը եթէ յղանայ կաթը կը քիչնայ, այսու ամենայնիւ մանկաբարձներ խել մը կիներ նկատած են որ մինչև իրենց երկրորդ զաւակնուն ծնանիլը առաջինը կատարեալապէս սնուցած են և առանց ընդմիջելու չարունակած են երկրորդն ալ դիեցնել։ Կովը յղի մնալով հանդերձ յղութեան մինչև կէսը և երկու երրորդ ժամանակը կրնայ մեծ չափով կաթ տալ։ Միջընթաց յղութեան մը կնոջ կաթին բազադրութեան վրայ ըրած ազդեցութիւնը առանձին ուսումնասիրուած չէ, թէև բազմածին կիներ կ'ուզեն հաստատել կաթին փոփոխութիւնը և դիեցող մանուկին վրայ ըրած լաւ կամ դէշ ազդեցութիւնը (կաթ ըրկաւ, կաթ օքնեց ըսելով. ըստ իրենց այլասեռ յղութեան կաթը կը վնասէ, հաճամ կաթէ եա)։

. . . . . .

7. — Անոանական յարաբերութիւնները. — Անոանական յարաբերութիւնները ծիծ տուող կիներու վերաբերեալ յղանալու կարելիութենէն զատ ուրիշ վտանգ մը չեն ընծայեր ոչ կայն լաւ է չափաւորել։

8. — Կաթին տարիքը. — Կաթին տարիքը իր չափին և բաղադրութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի, կնոջ կաթին քանակութիւնը կաթնատուութեան հինգ կամ վեցերորդ ամիսներուն մէջ կը չատնայ։ Պատմուած է որ կովին կաթը առջի 15 — 20 օրերուն մէջ կը չատնայ և 3 — 4 ամիս վերջը կ'սկսի պակսիլ, եօթներորդ ամսոյն մէջ կէսը և իններորդ ամսոյն մէջ հազիւ քառորդը կը մնայ։

9. — Կիելոն ազդեցութիւնը. — Կովին և էշին կաթը ամեն մէկ կիլոելուն միևնոյն բազադրութիւնը չեն ունենար, կարագին չափը կիլելու վերջին պահուն աւելի չատ է քան սկզբնաւորութեան։ Առաւօտուն կիլուած կաթը երեկոյին կիլուածէն հաստատուն նկատելէ քիչ հարուստ է։

10. — Սեռները ազդեցութիւնը. — Կաթին բազադրութեան և չափին վրայ սնուցող ըրած ազդեցութիւնը չատ անկատար կերպով ճանչցուած է. այս նկատմամբ վրայ Պարնիէ և Շանթրէօլ հետևեալ եզրակացութիւնը կ'ընեն « յայտնի է որ սնուցողարար և չափազանց սնուցող մը կաթին չափը կ'աւելցնէ, Բարմանթիէ Տէյէօ կը նշանակեն մէկ երբ սնուցողը անմիջապէս բարւոքի կաթը նախ անցողաբար կը նուազի և յետոյ մնայուն կերպով կը չատնայ։ Վէրնուա և Վէքերէլ կը խորհին թէ հարուստ սնուցող մը կաթին չափը և բնապատիրին և շաքարին մասերը կ'աւելցնէ, իսկ չափաւոր սնուցող մը կարագը և բնապանիրը կը չատցնէ, նոյն դիտունները զէշ սնած կիներու կա-

թին պակասին և հաստատուն նիւթէ աղքատանային նչմարած են։ Տէքէդն Փարիզի պաշարման միջոցին միևնոյն արդիւնքը ստացած է. Սիմոն անօթութենէ տառապող կիներու կաթին բնասպիտային նիւթերուն և կարագին չափազանց նուազիլը և շաքարին գրեթէ անփոփոխ մնալը նշանակած է, ըստ Տուայէրի ազահօրէն ուտելէ վերջը կաթին յանկարծակի պակասիլը տեսնուած է։

«Սնունդի տեսակներուն աղդեցութիւնները քիչ ճանչցուած են, ոսպը, ղոդամէն, կաղամբէն և գետնախնձորէն յատկութեամբ և քանակութեամբ աւելի հարուստ կաթ մը կը մատակարարէ, գարիի ջուր խմող կովերը պարզ ջուր խմող կովերէն աւելի կաթնատու կ'ըլլան, թարմ խոտերը չոր խոտերէն աւելի յրոտ կաթ մը կը հայթայթեն, չոր խոտը միայն լաւ է, բորակածնային, նչային և իւղային սնունդներու մասնաւոր աղդեցութիւնները գիտնալ կարևոր է. քննութեանց մեծագոյն մասը, հողագործական տեսակէտով, մեզ կ'առաջնորդեն հաստարակ խոտեր գործածել որ աւելի խառն սնունդներ են, այս ուղղութեանց մէջ սնունդի տեսակը միայն կաթին քանակութիւնը և կամ հաստատուն նիւթերը կը փոփոխէ, Բէլիկո 15 օրը անգամ մը մատակ իշուն կերը փոխելով տեսած է որ տակին և վարսակին աղդեցութեամբ կաթը քանակութեամբ չատ և բնապանիրէ հարուստ եղած է, իսկ ստեպղինի աղդեցութեամբ կաթին չափը ինչպէս նաև բնապանիրին և կարագին մասերը խիստ պակասած են, գետնախնձորին աղդեցութեամբ կաթին չափը մէջին և բնապանիրին մասը քիչ կ'ըլլայ։»

Սնունդին կաթի վրայ ըրած աղդեցութիւնները կատարեալպէս և որոշակի ստուգուած չէ. չատ հեղինակներ իրարու հակառակ արդիւքներ քաղած են, օրինակի համար, Թօմսընի և Շթօհմանի փորձերուն նայելով՝ բորակածնային սնունդները կաթին կարագը կը չատցնեն, բայց ընդհակառակն Բէյֆէրի փորձերուն նայելով կը նուազեցնեն, նոյնպէս ըստ Տիմայի նոյն սնունդը կաթին շաքարը կը քիչցնէ, մինչդեռ ըստ Վուայի պէտք էր չատնալ։ Վերջապէս սնունդը յօրինուածքը պահելով կրնայ սնունդին ոյժերը հաւասարակշռել, վասն զի ծիծերը իրենց պէտք եղած նիւթերը յօրինուածքէն առնելով կաթը կը չինեն որով կենդանին կը նիհարնայ, գիրցող կենդանին քիչ կաթ կուտայ։

Ստնատու կիներու և կաթնատու կենդանիներու խմած չափազանց հեղուկները կաթը թէև կը չատցնեն սակայն բնասպիտային նիւթերը և կարագը կը նուազեցնեն, այսպէս չոր ուտելիքներու տեղ կովերուն տակի կանաչ տերևներ կերցնելով Լէքլէր տեսած է որ չորս օրուան մէջ կաթին հաստատուն նիւթերը 1000ին 151էն 118ի իջած են։

(Շարունակելի)

ՏՕՔԹ. ՓԱՇԱԼԵԱՆ

ԱՉՔ ԵՒ ԱՐՑՈՒՆՔ

Աչքերը երեսին գոհարները, սրտին թարգմանները, և հոգւոյն լուսանկարն են։

Աչքերը կ'խօսին, թէ լեզու ունին թէ ոճ, դառն արցունք կամ քաղցրը — ատելութեան կամ երանութեան նշոյլներ են։

Երբ երկու անծանօթ աչքեր իրարու կ'հանդիպին, դիրար կ'բարևեն և կ'անցնին։ Եթէ դիրար կ'ճանչնան՝ բարևը աւելի նշանակութիւն ունի և առ հասարակ կ'թարգմանուի « Բաւէ լաս »։

Եթէ մտերմութիւն ունին իրարու՝ կ'ըսեն — « Մնաս բարեաս »։

Եթէ երկու տարբեր սեռի կ'վերաբերին, իրենց նշանակութիւնը հետեւեալ կերպիւ կ'թարգմանուի —

Նրա — ընչերք — Ձեր հարստիք եվ։

Նէր — ընչերք — Ի՞նչ իմն։

Եւ անվրդով իրենց ճամբան կ'շարունակեն։

Կամ թէ,

Արական աչքերը — Պաշտելի եմ։

Իգական աչքերը — Շնորհալի եմ։

Եւ իրենց ճամբան կ'շարունակեն, բայց մերթ ընդ մերթ ետևնին կը դառնան դիտելու համար պոչով (աչքին պոչով ըսել կ'ուզեմ, չշփոթենք)։

Այս խօսակցութիւնները ամեն օր հազարաւոր անձերու հետ կ'փոխանակուին, կարելի է տեսակին մէջ փոխուին, բայց միևնոյն նշանակութիւնը ունին։

Օրինակի ազագաւ մարդու մ'աչքերը կրնան յայտնել — « Էնէնիմամ եվ հոմար »։

Կնկան մ'աչքերն ալ — Դժոխք չէ որ եվ հետ խըխտէմ »։

— Գեղ պիտի հետևիմ։

— Ո՞վ կ'արգիլէ։

— Կ'պատահեմ գքեզ։

— Իմացայ։

Եւ ահա՛ կ'սկսի սիրոյ մը յառաջաբանը։

Երկու բարեկամներու աչքեր դիրար կ'համբուրեն, երկու սիրահարներու աչքեր դիրար կ'պաղնեն, երկու մանկական աչքեր իրարու կ'ժպտին։

Երբ սիրաը վիշտերով համակուած է, աչքերը դէպ ի երկինք կ'բարձրանան ու կ'հառաչեն։

Երբ վիշտը բաւական խորունկ է՝ աչքերը կուլան, բայց եթէ այնչափ դառն չէ և արցունքները կ'արգիլուին, աչքերը կ'չորնան ու կ'ըորըոքին։

Ակնարկի լեզուն ատէպ աչքերու կեղծաւորութիւնն է։

Երբ կին մը կեղծել կ'ուզէ, տեսակ մ'ակնարկներ կ'գործածէ։

Երբ պարմանուհի մը բազմութեան մէջ երկու մարդու հետ կ'խօսի, զինքը շատ նայողին չդիտեր, և ով որ իրեն քիչ կ'նայի գան կ'սիրէ։

Սիրամոլ կնկան մ'ակնարկը լուռն արուեստական գործ մ'է։ Միշտ

յարմար կերպիւ կ'չափէ, կ'կշռէ իւր ակնարկը մեհենին աւիւնով, մեհենին խանդով ինչպէս երէկ՝ նոյնպէս այսօր, այսօր ինչպէս վաղը, որոշ կերպիւ՝ որոնք կրնան թէ սեր յայտնել թէ գութ, թէ արհամարհանք և թէ հաստատամտութիւն, ինչպէս կրնան յայտնել նաև . . . ոչինչ։

Կան ակնարկներ որ մինչև սրտի խորը կ'թափանցեն, կան ակնարկներ ալ որ մարթի վրայէ կ'սահին։

Կան ակնարկներ որոնք կ'թուին թէ ամէն բան կ'ըմբռնեն և անորոշ են, կան որ անորոշ կ'թուին և ամէն ինչ կ'ըմբռնեն։

Աչքերու լեզուն գգացմանց վրայ կ'կայանայ։

Երբ աչքերը տարտամ կ'լացին՝ երևակայութիւնը կ'խորհի, երբ անշարժ կ'յառին՝ երևակայութիւնը կ'նիրհէ։ Այս վայրկեանները տհասարակ կ'պատահին, կան անանկ վայրկեաններ ալ ուր մտածմունքը վազելէ յոգնած կ'հանդչի։

Ասի կ'ըսուի ծաքմանց ժոռնը։

Ակնարկի ներդաշնակութիւնը ոչայ դղրնէն կախում ունի։

Սև աչքերը հաստատամտութիւն, իշխանութիւն, փառասիրութիւն և հուր կ'արտայայտեն։

Սևը սուլուկ դղրնն է։

Սպիտակ երեսի վրայ սև աչքերը կ'ներկայացնեն՝ արշալուսի ատեն փոթորիկ մը—տժգոյն դէմքի վրայ՝ դիշերը վերջալուսոյ առեն—թուխ դէմքի վրայ՝ ցոց մը՝ որ կ'արծարծի վառարանին մէջ։

Եթէ կուզէք բացակէտ, խանդավառ վճիտ ակնարկ մը՝ լի սիրով՝ ատելութեամբ, վհատութեամբ՝ սև աչքերու մէջ փնտռեցէք։

Կապոյտ աչքերն քաղցրութիւն, գորով և փափկութիւն կ'արտայայտեն։

Երկնագոյն կապոյտը՝ անհունութեան գոյնն է։

Սպիտակ դէմքի վրայ կապոյտ աչքեր կ'ներկայացնեն երկու պայծառ աստղ՝ երկնից կամարին վրայ արշալուսի առեն — գունատ դէմքի վրայ՝ մարգարիտներու ադուցուած երկու ապամանդ — թուխ դէմքի վրայ՝ երկու աստղ ամպերու մէջ տեղը։

Եթէ կ'ուզէք գողտրիկ, անմեղ, ոգևշունչ, ակնարկ մը՝ ցաւալից կամ թախանձագին՝ երկու կապոյտ աչքերէ խնդրեցէք։

Երբ երկու կանանչ աչքեր վրաս կ'յառին՝ խակոյն կ'նուադիմ։

Կան ուրիշ աչքեր ալ որ իրենց գոյնով ամենևին նշանակութիւն մը չունին, ուստի հասարակ և աննշան են։

Կան աչքեր ալ որոնք գիշերուան պէս մութ՝ առանց լուսոյ աչքեր են։

Ասոնք արտաքին աշխարհին հետ բնաւ չեն խօսիր, այլ իրենց խղճին հետ, Աստուծոյ հետ կ'խօսին այն համր և պերճախօս լեզուն՝ զոր արարածի հոգին կ'գործածէ իւր Արարչագործին հետ։

Երջանիկ են կոյրերը, վասնզի իրենց աչքերը երբէք չեն աներ, և ուրիշի աները չեն պեռներ։

Արցունքն է սրտին՝ ինչ որ է անձրևը դաշտին, զան կ'սփոփէ ու կը բեղմնաւորէ։

Ցաւի արցունքէ մ'աւելի չկայ ուրիշ վեհ բան մը, կիրքերու անցունքէ մ'աւելի չկայ ուրիշ ստորին բան մը։

Կան անանկ վայրկեաններ՝ ուր արցունք մը դառնութեան տխուր քերթուածն է։

Կան անհնարին ստեղծումներ ալ՝ ուր ստեղծումեան և կրից սոսկալի բանաձեւութիւն մ'կ։

Մարդկան արդուճքը՝ ամառնային անձրեւն է։

Նորատի կանանց արդուճքները՝ կակուղիլոսի արդուճքներ են։

Կրից արդուճքները՝ աստանային արդուճքներ են։

Մսյրական արդուճքները՝ հրեշտակային արդուճքներ են։

Կանայք կուլան առանց զգալու, բայց իրաւ է նաև որ չկայ մարդ մը որ չյուզուի երբ կնկան արդուճքներ տեսնէ։

Ինքզինքնիս հաստատամիտ մարդեր կ'կարծենք, բայց արտեւանանց վրայ յարմար առեն երեւցած կաթիլ մ'արդուճքէ կ'յաղթուինք։

Վեհանձն սիրտերը միշտ տակաւ կ'ըլլան և զգայուն։ Եւ զգայուն սիրտ մ'ալ երբ արդուճք մը տեսնէ միշտ պիտի աշխատի սրբել։

Տիկիններ'ը շատ մի' լար, մանաւանդ արդուճքները մի' կեղծէք։

Եթէ քիչ մ'արդուճք ձեր դեղջն փայլ կ'տան, շարունակ լալով' բոլորովին հակառակը կ'պատահի—խորշումները շատ կ'աւրեն ձեր չքնաղ երեսը։

Ծամուտան մը վիշտերու արտասուքը հոգւոյն մարգարիտներու չիմեր են, օրուան մ'արտասուքը աղմուտ ջուրի գոլորշիքներ։

Սապէ է նաև որ ուրախութիւնն արդուճքները ջուրի կաթիլներ են, բայց մի' կեղծէք վշտագին արդուճքները, վասն զի երբ մարդիկ ձեր այս կեղծիքը իմանան՝ փոխանակ այս արդուճքները իրենց սրտին մէջ քամելու պիտի Թռչնեն որ Թաչկինակով սրբէք։

Աւետ Բոբէ.

Գ. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ.

ՋԱՏԻԿՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ապրիլ 17, Զատկի առաջին օրը, Ս. Երուսաղէմայ Ամենայն Պատրիարքը՝ Աւետ. Տ. Յարութիւն Սրբազանին տօնախմբութիւնը էջմիածնէն հեռագրաւ շնորհաւորած էր Վեհափառ Հայրապետը։

Նորին Աւետութիւնը՝ միաբանական երեկոյեան սեղանին նախագահելով, ուխտաւորներէն ոմանք ալ ի ճաշ հրաւիրած էր, և համեստ խրախճանաց հանդէս մը սարքելով, Աւետ. Վեհապետեան Պատրիարք և Լուսարարապետ Գեր. Խապայեան Տ. Սահակ Սրբազան առենախօսութիւնները ըրած են պետրադային յարմար։

Այս առթիւ, ծանօթ կենսագիր՝ Այվազեան Աբրահամ Էֆենտին ալ հետևեալ բաժակաճառն արտասանած է, ի պիտոյ Տաճկահայ ուխտաւորաց։

Բարձրաչնորհ Սրբազան Հա՛յր.

«Թոյլ կուտա՞ք, Շար-Հայ-Կենսագրութեանցի խոնարհ հեղինակին, որ Տաճկաստանցի Հայ ուխտաւորաց կողմանէ քանի մը խօսք արտասանէ, Միաբանութեան այս հացալից ու օրհնալից սեղանին վրայ։

Բայց ո՛չ, Միաբան եղբա՛րք, մի ամաչէք յինէն՝ ո՛չ վեհապետեան Պատրիարքին հոգեչունչ և քաղցրաշունչ ձայնը, ո՛չ Երեմիա Արքեպիսկոպոսին քաջալերը և արտաքուստ ներդաշնակութիւնը, ո՛չ պատկերահան և բարոյախօս Մամբրէ Սրբազանին յստակ և արծաթեայ առոգանութիւնը, և ո՛չ ալ լուսարարապետ Սահակ Եպիսկոպոսին բանաստեղծական, թրթռուն, այլ միշտ սահուն ու ողորկ չեչտերը։

Էջմիածի՛ն, Մշոյ Ս. Կարապե՛տ և Երուսաղէ՛մ։

Ահա՛ մեր հոյակապ ուխտատեղի մենաստանները, որ դարեց երրորդութիւն մը կը կազմեն Մայրավանուց մէջ։

Ոչ ոք կրնայ ուրանալ թէ՝ Հայ եկեղեցւոյ գլուխն է Էջմիածին, սիրտն է Մուշ, իսկ հոգին՝ Երուսաղէմ։

Աբգարէն սկսեալ՝ Երուսաղէմ, Հայոց հոգին եղած է և Հայոց սրտին մէջ՝ Երուսաղէմի անունը մշտապրկի է։

Հայն՝ յԵրուսաղէմ, իբրև հնախոյզ կամ զբօսաչրջիկ չի ճանապարհորդեր, այլ հաւատքն է որ կը մղէ զինքը յԵրուսաղէմ՝ համբուրելու այն հողը, ուր Աստուածորդին կոխեց, սրբեց Յորդանանու ջուրը, մկրտեցաւ. և չնչելու օդն Յովսափաթեան ձորին՝ ուր մեռելայարոյցն Յիսուս պիտի կոչէ՝ «Արի՛ք մեռեալք ի դատաստան»։

Հայն կուզէ ծնրադիր եղնել Գողգոթայի լեռը, ուր խաչեցաւ մեր Փրկիչն, և ներեց մեղաւորներուն, ըսելով՝ «Թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։

Այո՛, խանդաղատանօք կը դիմէ Ս. Գերեզմանին առաջ, և գլխահակ կը մտածէ իւր անցեալը, ու կը զղջայ, և արտասուալից աչօք կը խնդրէ յաւիտենականութեան ապացոյցին, Յարութեան գերեզմանին վերև՝ իր յաւիտանական կեանքը։

Եւ յետոյ, ձեր մէջէն ո՞վ չի բաղձար՝ բարձրանալ Golgothայ լեռը, ուր համբարձաւ Քրիստոս, և հո՛ն չվերանար մտօք։

Ա՛հ, Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, Նախանկարդ յերկրի աստ՝ վերնոյն Երուսաղէմի, մեր եկեղեցւոյ հոգին՝ նորոգէ՛ մեր եղ-

բարց սրտերն, և տուր չնորհ մեզ, որ վերանորոգուած դառնա՛նք և հասնինք իւրաքանչիւր ի բնակութիւն մեր ի Յիսուս Քրիստոս։

Այս վանքին մէջ հանգչող յոգներանեալն և լուսացեալն Գլխաղիր Ս. Յակոբ, զօրավիգ ըլլայ, և արժանի ընէ՛ ամեն Հայու, տեսնե՛լ սոյն փառաւոր վանքը, որու արժանի Հովուապետն՝ Վեհաչնորհ Վեհապետեան Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարք, պատուեալ և գնահատեալ Նորին Կայսերական Վեհափառութենէն՝ մէճիտիյէի և օսմանիյէի առաջնակարգ շքանշաններով, ուրախութեամբ բազմած կը տեսնենք Միաբանութեանս սեղանին գլուխը, և մենք ինքզինքնիս բարեբաղդ և երջանիկ կը համարինք չնորհաւորել իւր անուան բարեբաստիկ տարեդարձը, այսպիսի փառահեղ օր մը։

Ուստի, կը մաղթեմ որ Ջատկական աւանդական կարմիր հաւկիթին հետ՝ կտրել հաճի, վանքին պարտուց չղթայն, և ազատե՛լ վանքը այս ճնշող և հիւծող պարտքէն՝ որու համար ամենքնուս սրտերն ալ ապաքէն ճնշուած են։

Մաղթե՛նք, որ Գլխաղիր Ս. Յակորայ Առաքելական Աթոռը, Վեհապետեան Սրբազանի և մեղուաջան Միաբանութեանդ չնորհիւ, արձակուելով իր պարտուց կապանքէն, ևս քան զևս բարգաւաճանայ՝ ի մեծ ուրախութիւն Հայ ժողովրդեան։

Եւ այս օրը՝ հեռի չէ՛ անչուշտ, քանի որ մեր Ինքնակալ Վեհափառ կայսրն, ազգիւրն մեծագործութեանց, իր գթառատ սրտիւ՝ նկատի առած է վանքին՝ այս վարանոտ վիճակը, և հարկ եղած հրամանները չնորհած է, առ որ անկ է, որպէս զի Ս. Յակոբեան Միաբանութիւնը ազատի իւր ծանրածանր պարտքէն։

Եւ արդ, մաղթե՛նք որ՝ Աստուած, մեր անզուգական Կայսեր կեանքն պահէ անփորձ, և գահն՝ անսասան, և մենք ապրին՛ք անոր հավանոյն ներքև կոչելով յաւէտ՝

« Կեցցէ՛ յաւէրժ սուլթանաց սուլթանն, Վ.ազին, Ապտ-իւլ-Համիտ Խան Բ. »։

Ա. Ե. Ա.ՑՎ.Ա.ՋՍԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս 13 Մայիս 1894

Բաբկամ. Ո՞վ ըսաւ թէ աչքը տեսնելու, ականջը լսելու և միտքը խորհելու պաշտօն ունին։ Ես սկսայ հակառակ եղրակացութեան հասնիլ փորձով։ Վասն զի աչքս խոշոր խոշոր կ՚բանամ, կ՚նայիմ, կ՚դիտեմ, ի՛նչ ստակալի բան, և չեմ տեսներ։ Ականջս կ՚սրեմ, ձայներն խառն ի խառն կ՚լսեմ, բայց ոչ տըպաւորութիւն մը, ոչ իմաստ մը կ՚ընդունիմ։ Բազզանք են եթէ ոչ փսխանք որ կ՚հանին լսողական թմբուկիս։ Ձակատս կ՚շրվեմ, երևակայութիւնս կ՚դրգռեմ, իրերն ու մարդիկն իրենց յատուկ գոյնով ըմբռնել և իմաստասիրական գործ մ՚յօրինելու կ՚ելնեմ, և ահա լոկ մութ գլխէս, լոկ չոգի ըղեղէս, լոկ անկապ բառեր դրչէս կ՚ելնեն, կ՚թափթփին և յուսահատ կ՚հառաչեմ։ — Տէր Աստուած, արդեօք կո՞յր եմ ո՛չ, արդեօք հաւկո՞ւր եմ, ո՛չ, արդեօք խո՞ւլ եմ, ո՛չ, արդեօք բթամի՞տ եմ, ո՛չ։ Աչքս անքօղ, ականջս բաւական սուր և միտքս ոչ նուազ բաց կ՚երևակայեմ։ Ուրեմն . . . ուրեմն . . . Թերևս դիմակներ կ՚պարեն չուրջս, ստուերներ կ՚պաշարեն խելքս, Թերևս ուրուականներ են քան իրական էակներ իմ բոլորտիքս տատանող բաներն։ Ուրեմն Պաքոնի վարդապետութիւնն ամեն մարդու և ամեն ժամանակի համար չէ։ Թերևս ինչպէս մտային նոյնպէս տեսլական պատրանք կան, որ իրերն ցոյց կտան մեզ ինչ որ իրօք չեն։ Բոլոր ճիգս կ՚թափեմ որ տեսնեմ ու դատեմ, և ահա իրողութիւնն եղի պէս կ՚սահի կ՚անցնի մատերէս, Թողլով միայն պղպջակ մը, գոլորշի մը, ստուեր մը . . . ։ Եւ սակայն մեծ վարպետն լրտ Պաքոն, մակածական իմաստասիրութեան այդ հիմնադիրն, ի՞նչ ըսաւ — Թէ՝՝ առանց դիտողութեան և փորձի չէ կարելի ճշմարտութեան հասնիլ, Թէ ո և է բանավարական գործողութիւն, Թէ և հնարիմաստ, ո և է պատճառ, Թէ և լուրջ, չեն կարող ինքնին գոհ ընել ճշմարիտ ճշմարտին հետամուտ միտք մը։ Այս փորձական մեթոտն վեր ի վայր ըրաւ դիտական հին դըրութիւններ և նոր գիտուններ բերաւ աշխարհի, մէն մին իր յատուկ դիւտն ունենալով իր բարդ դիտողութեանց ծայրն, դիւտեր որ այժմ, ի շնորհս մարդ կային հնարագիտութեան, Թէ կենաց նոր շնորհ և Թէ մահուան ահաւոր չուք կ՚բերեն։

Բայց ի՞նչ օգուտ ունին ամեն նոր գիւտ ու մեթոտ, թող բարձր խնդիրներ, երբ մտաւոր, առտնին բաներ անգամ տեսնելու կարողութենէ զուրկ եմ, թէև դիտելու և փորձելու մեծ փափաք ունիմ։ Եթէ գործ չունի Թող մանկավարժը խրատէ որ աշակերտ մը պարտի իր դիտելու կարողութիւնը մշակել, թէ լաւ ևս է բան մ'ուսնիլ դիտողութեամբ քան թէ աւանդութեամբ և լրոյ, թէ ամեն պաշտօնի համար էական պայման մ'է զարգացման և յաջողութեան՝ դիտողութիւնն. բնագատումն, քիմիաբանն, հանքաբանը, պատմաբանն և ամեն քննաբան՝ որ եզրակացութեան, համադրութեան և դասակարգութեան մը կ'ուզեն հասնիլ՝ պարտաւոր են իրենց խուզարկութեանց դիտական հիմ մը տալու համար՝ դիտողական մեթոտն ի գործ դնել։

Դիտե՛լ, քանի՛ անհերթեր պահանջում, առարկեա Թերևս Մինէ մարդ կարո՞ղ է աստղագէտ լինիլ երբ երկինց աստղերն ուրիչին աչքովը կ'դիտէ. երկրաչա՞փ լինիլ, երբ ամեն ձև իրրև քառակուսի կ'ընդունի. նկարի՞չ լինիլ, երբ սպիտակն իր սիրական գոյնն է, — Եւ սակայն ինչպէս կ'ըսէ փիլիսոփայ մը, —դիտող մանուկ մը, դիտող մարդ կ'լինի. այժմ տղայ մը կրնայ շատ աւելի բան դիտնալ ջանագան իրերու վրայ՝ քան Թէ հին փիլիսոփայ մը։ Կալիլէ աշտանակի մը ճօճումը դիտելով՝ ճօճանակի չարժման օրէնքը գտաւ. Ուադ չոգնի այժն ըմբռնեց Թէ-յամանի մը ծածկոյթին չարժումը դիտելով, խեղճուկ վանական մը վառօդը գտաւ, և տեսարանի մը սպասաւորն ոսպնաձև ապակիները։ Անշուշտ ամեն մանուկ չկրնար Նիւթըն մը, Լինէոս մը, Ֆրանքլին մը, Տէվի մը լինիլ, սակայն դիտողութեան չնորհիւ դէթ կենաց շատ կնճռոտ խնդիրներ կրնայ լուծել և իր վիճակին բարւոքման միջոցները գտնել։

Արդ՝ դիտողութեան կարողութիւնն այնքան Թոյլ է մեր մէջ՝ որ ստէպ ժամանակագրական, պատմական սխալներէ զատ՝ հաշուական, ընտանեկան և տոհմային վրիպակներ ալ կ'գործենք։ Ես միայն չեմ մեղաւորն, կամ ապիկարն այս մասին։ Ամեն օր կ'տեսնեմ չորս դիս պատահիներ որ կէս դիշերին արև կ'փնտռեն, ամառը վառարան կ'վառեն և ձմեռն ձիւնի վրայ կ'պառկին. դիշերը ցորեկ, ցորեկը դիշեր կ'ընեն հապճեպութեան հետ օր անցնելով։ Եւ քանի՛ քանի լ—ոաֆ հայեր կան որ էշով և ուղտով կ'ճամբորդեն ուր որ երկաթուղի կայ և չոգենաւ կը փնտռեն ուր որ ծով չկայ. իսկ Թատրոն գացող և Թաւշեայ

աթոռներու վրայ նստած՝ երգչուհիներու հետ ծաղիկներու լեզուն խօսողներ քիչ չեն։ Հապա ի՞նչ տեսակ էակներ են անոնք՝ որ թէև անսիրտ և անհոգի, կարծես Հոգւոյն Սրբէն ներշնչուած են և Աւետարան ու Սաղմոս կ'կարդան մեր գլխին, հրեղէն լեզուներ կ'թափեն մեր շուրջն և փոխարէն ոսկեղէն դրամներ կ'հաւաքեն։ Այլ եթէ աւելի վար կամ հեռուն երթաս և տեսնես որ հիւղակէ մը զուրկ մարդն՝ ապարանի յատակագծով մը կ'պարապի, հացէ զուրկ չքաւորն համադամներ կ'ապսպրէ՝ յուսալով որ բարերար մը ծախքը սիտի վճարէ, նօթուխեննէ բերանը հոտող կինն՝ Բարիզեան տարազով հրապարակը կ'սիգայ և սրբազին ակնարկներով որսեր փնտռելու կը ջանայ, մինէ չե՞ս ըսեր որ այս ամենն անդիտողութեան ցաւալի արդիւնքն են։

Եւ ամէն կըսեմ քեզ, բարեկամ. թո՛ղ դիտունն որչափ կամի բնական երեւոյթներ զննէ և գիտական բանաձեւներ յօրինէ, թող որչափ կ'ուզէ պոռայ կանչէ թէ մարդկային կեանքըն ալ քանակով ու կարկինով կրնայ չարժիլ՝ գիտողութեան չնորհիւ, ես, կարելի է դուն ևս, չեմ հաւատար թէ՝ ինչ ինչ պայմաններու մէջ, կեանքն կանխորոշ ուղղութեամբ մը կրնայ ընթանալ, քանի որ կիրքն, նանրասիրութիւնը և հակամարտ շահեր մէկ կողմէ, միամտութիւն ու մթութիւն միւս կողմէ շարունակ կ'սղոտրեն մեր բնական և բարոյական տեսութիւնն, այնպէս որ անհնար կ'լինի մեզ իրերն ու մարդերն գիտական որոշ չափով մը կշռել ու դատել, հետևապէս կենցաղն միշտ չեղն ի չեղ պիտի ընթանայ՝ ատչպ մթասէրներու և նենգաւիտներու ճարակ։

Եւ արի տես որ գիտութիւնն մարդու աչքի զօրութենէ դժգոհ՝ ահագին ապակեայ մեքենաներ կ'հնարէ որ՝ բնութեան ամենէ փոքրիկ արարածներն և թագուն խորհուրդներն զննէ և երևան հանէ, մինչդեռ մեզի պէս շատեր՝ իրենց քթին ներքեւ գտնուած սկայածու բաներ քննելու համար եթէ ոչ աչք, տեսողական զօրութիւն չունին։ Ի՛նչ հակապատկեր գիտակին և պիտակին մէջ։

ՇԱՀՆՈՒՐ

ԼՐԱՔԱՂ

ԴԱՂԹԱՅԻՆ խնդիր մ'այն ինչ կը լուծուի, եւ ահա ուրիշ կնճիռ մը կ'ծագի, որ նոր բանակցութեանց, սպառնալեաց եւ մինչեւ իսկ պատերազմական պատրաստութեանց առիթ կ'լինի։ Այժմ մի քանի եւրոպական տէրութիւններ սովոր են վայրենի կամ թերակիրթ ժողովրդոց հետ նախ առեւտրական յարաբերութիւններ հաստատել, առեւտրական դաշնագրեր դնել, եւ ապա այն դաշնագիրներու վրայ նոր պահանջումներ հանել, թեւարկութեան եւ ի վերջէ տիրապետութեան իրաւունք մը, կամ լաւ ևս պատրուակ մը վնտռել, եւ զինու զօրութեամբ իրենց նպատակին հասնիլ։ Այսպէս խաղաղ հեռաւոր ժողովուրդներն վրդովել եւ անոնց երկիրները գրաւել՝ նոր ոճով քաղաքակրթութեան դատին ծառայել է։ Հեռաւոր երկրակալութեան մարմաջը կ'տանջէ մանաւանդ ծովափնեայ մեծ պետութիւնները, որոնց գաղթային զօրութեան ծագումն մեծ մասամբ բռնութեան վրայ հիմնուած է։ Թո՛ղ որ Անգլիա միշտ Ափրիկէի զանազան կողմերն պայքարը կ'չարունակէ բնիկներու դէմ՝ որպէսզի ըմբոստներն իր լծին ներքև ձգէ, թո՛ղ որ Հնդկաստանի մի քանի զօրաւոր ցեղեր միշտ թշնամական դիրք մը բռնած՝ կ'խլրտին օտար իշխանութեան դէմ, հիմակ ալ Խաղաղականի մէջ Սամօա կղզեխմբին վրայ Բրիտանիա իր բացարձակ հովանաւորութիւնը կ'ջանայ տարածել եւ Նոր–Զէլանտայի կցել՝ հակառակ Գերմանական եւ Ամերիկեան թեւարկութեան, որք կ'պնդեն թէ մեծամեծ շահեր ունին այդ կղզիներուն մէջ եւ չպիտի դիջանին երբէք որ Անգլիա իրր բացարձակ տէր չարժի։ Անտարակոյս՝ այդ վէճն պատերազմի պատճառ չկրնար լինիլ, սակայն անգամ մ'ևս կ'հաստատէ այս իրողութիւնն թէ՝ ինչպէս գաղթային հիմնարկութիւններ կ'կազմուին եւ թէ ինչպէս բարեկամ տէրութեանց շահեր հետզհետէ անհունս տարածուելով կրնան իրարու հետ բախիլ եւ օրին մէկն մարտային որոտումներ արձակել։ Միւս կողմէ՝ Ֆրանսա կ'փաթաթի Պելժիոյ հետ ունեցած գաղթային հաշիւները ընդ միշտ կարգադրել ի Քոնկօ, եւ այժմէն տիրանալ այն երկրին որու վերհսկողն է Լէօրօլտ թագաւորը։ Քոնկօի պետական նորամէն դրութիւնն բաւական կնճռոտ կ'երեւի, քանի որ այս մասին եղած բանակցութիւնները կ'խզուին՝ Ֆրանսա պատէհ առթի մը սպասելով անշուշտ իր նպատակին հասնելու համար։ Մաստակաւարի խնդիրն ալ բաւական հոդ կ'պատճառ է Ֆրանսական կառավարութեան, որ ցարդ կ'կարծէր թէ այդ ահագին կղզւոյն գրեթէ տէրն է, եւ որ այժմ կ'տեսնէ թէ տեղացիք՝ Մալկաշներն՝ իրենց թագուհւոյն ղրդմամբ՝ կ'հակառակին օ–

տար թեւարկութեան և հին դաշնագրեր առ ոչ ինչ կ'գրենն Արդէն Ֆրանսա ռազմամթերք կ'ուղարկէ ի Մատակասկար որպէս զի բնիկներն զդաստութեան բերէ, սակայն մեծ բանակ մը և նաւատորմ մը այդ միջոցիկալի և նենգալի ջրերը յղելու պիտի յանձնառու լինի՞ թէ ոչ, այդ է բաւական ծանր խնդիր մը։ Կառավարութիւնն եթէ ոչ մանուան պատժին ջնջումն, անոր անօրէնութիւնն հրապարակաւ ըստ առաջնոյն ի գործ դնելու տեղ բանտերու մէջ պիտի կատարել տայ, ինչպէս Անգլիա, նորագոյն օրինագծի մը համեմատ, պատրաստուելով միանգամայն 1900 ի Արուեստահանդիսին կարգապրութիւններն այժմէն սկսիլ։ Իսկ Անգլիոյ կառավարութիւն 14 ձայնի մեծամասնութեամբ քուէարկել կտայ Խորհրդարանին ընտրական ծրագիրն, մեծամասնութիւն՝ որ երեւան կ'հանէ լորտ Սոզպէրիի պաշտօնէութեան տկարութիւնն, ազատական և միութենական կուսակցութեանց անհաչտ դիրքն և ընդհանուր քուէարկութեան մը հաւանականութիւնն։ Նոյն մեծամասնութեամբ կ'քուէարկուի նաև երկրորդ ընթերցումն Միութենական կուսակցութեան պետերն՝ լորտ Սալզպըրի, Պ. Չեմպրլէն, Պ. Պալֆուր հաչտութիւնն անհնար կ'հռչակեն ցորչափ իրլանտական ինքնօրինութեան օրինագիծն կառավարութեան ծրագրին մէջ մնայ, և ընտրողներու կարծեաց դիմելու հարկն անհրաժեշտ կ'համարին, որպէս զի մի անգամ ընդ միշտ որոշուի այդ կարեւոր խնդրոյն առՋև Խորհրդարանի բանելիք ընթացքն և լորտերու ժողովին դիրքն՝ որու դէմ շարժումն զգրած չէ։ Հնանգարիոյ երեսփոխանական ժողովին քուէարկած քաղաքային ամուսնութեան ծրագիրն միջոցալի նպատ մը մէջ կ'մերժուի Աւագ ժողովին կողմէ, և Տը Վէլքերլէ վարչապետն, որ միշտ կ'մնայ իր պաշտօնին մէջ վայելելով թագաւոր կայսեր վստահութիւնն, անվհատ պիտի չարունակէ պայքարն՝ վերստին քուէարկել տալով երեսփոխանութեան այդ օրինագիծն, որու մերժումն կղերական դաստակարգին անհաչտելի հակառակութեան արդիւնքն է։ Բանի՞ դժուարին է մինչև իսկ լուսամիտ կարծուած ժողովրդեան մը մէջ՝ բանաւոր օրենք մը հաստատել։ Օսմանեան 10 միլիոն ֆրանքի փոխառութիւն, որու բաղմապատիկն յօժարութեամբ ստորագրուեցաւ ի Բարիզ՝ Թուրքիոյ ելմտական գործոց ընտիր մտաւակարարութեան և բարձր վարկին մի պայծառ ապացոյցն է։ Ներոպական օրագիրներ Ս. Պաւլին տկարութեան մասին լուրեր հաղորդելով՝ կը յայտնեն թէ նոյն ինքն Արեւմուտք քահանայապետն նոր պապի մը ընտրութեան համար պարտ ու պատշաճ հրահանգներ կ'տայ Կարտինալաց ժողովոյն։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՆՈՐ ՀՋԸՈՒՄԸ

ԸՆԴԴԷՄ ՆԵՐՊԱՍԻ ՎԱՇԱՓՈՒՆԱՆՑԱՑ

ԲՕԼԷՄՈՍԻ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

Անցեալ երկուշաբթի Ապրիլ 25 էն սկսեալ անակնկալ մեծ զեղջուկ ամառնային նորաձեւ կերպասեղէններու

ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՃԱՌԱՏԱՆՑ Մ'ԻՋ

ԲՕԼԷՄՈՍԻ մեծ վաճառատունը չատ անգամ կարեւոր վաճառահանդէսներ կազմակերպելով ամբողջ քաղաքին հիացում պատճառեցին, բայց իրենց ամբողջութեան մէջ ուրիշ նպատակ չունէին բայց եթէ ձեռքէ հանել հնաձեւ ապրանքներ և կտրօններ։

Ընդհակառակն այն՝ զոր այսօր հասարակութեան կընծայենք, բացառիկ մասնաւոր հանդամանք մ'ունի։ չէ՛ թէ ձեռքէ կը հանենք, այլ ի վաճառ կը դնենք նորաձեւութեան յատուկ զանազան ապրանքներ, որք կը հանենք, այլ ի վաճառ կը դնենք նորաձեւութեան յատուկ զանազան ապրանքներ որք կը վերաբերին ամառնային արդի եղանակին, կանանց, էրիկ մարդոց և տղայոց համար արդուզարդի և զգեստի նիւթեր՝ ամեն մեծամարդ անհամեմատ ընտրութեամբ և ըստ Եւրոպական վերջին նորաձեւութեան։

ԻՐԱԿԱՆԱՊԷՍ ԱԺԱՆ ԳԻՆԵՐՈՎ

Վաղեցէ՛ք ԲՕԼԷՄՈՍԻ վաճառատուններն ձեր ամառնային գնումներն ընելու այնպիսի գիներով որք գրեթէ ձրի են։

Ժ. Մ. ԳՕՆՏՈՒԼԻՍ եւ ԸՆԿ.



ՄԹՐՆՑ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ·

Ցրևց· Բաշ 91 — Շևյեճէևոց 34

Պ.ՆԱԽ, Փէյեր–Ալբը 32/34

Մարդ կրնայ ամեն տեսակ կարի մեքենաներու տեր լինել, ՄԻՄԻԱՅՆ շաբաթական 1/2 մէճիտ վճարելով։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր «Ֆրէնչ» ամենէ տակուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և տասնց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ԶՐի գաստառութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Աժան, դերձան, իւղ չափաւոր գներով։

Հաճոյանալու համար ԱՆԴԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎԱՃԱՌԻՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻՐի համար — Արժէքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամիսն։

ԻՋՄԻՐԼ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամեն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ թող դիմեն, 1857ե իվեր հաստատեալ, Եվանկէլիքօն Յունաց պատրոցին անցքին մէջ թիւ 8

առ **ՍՓԻՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ԶԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԼԻՈՐ

Հայոց Բաշ, Բեշիկթէշ Ճապրե

Ամեն տեսակ դեղերու մեծ խնամքով պատրաստութիւն

Չափաւոր գիներ

Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառները կը ղրկուին։

Պատիւ ունիմ ծանուցանել Արդեայ Հասարակութեան թէ՝ ամիջականի կերպով կը գործանեմ ակռաներ ամէնէ անտանելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անզգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն գործանելով։ Լցուած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի ֆափի։

Այն անձինք որ քանիցս կերպ ակռաներ չինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱՆ ու անզգալ լինելու վրայ զետեղել ակռաներու ամբողջ շարքը և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու թելերու յողնեցուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարքը անդլիական քառաչաքի վրայ։ Այս դրութեամբ քիմքին իր ձաշակը և լեզուն իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐՈՒՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ կը պահեն։

Փտած ակռաներու արմատներն անվիճական կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փոփաքողք կրնան դիմել Պատմախանէ փողոց, թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ

հվվգնոհ — ղվե ղվճյգի

8 « « ժօկցդամկ

Լ « « ժչյոտր

9 տվչդր ավովժաք ցօժռդ՝ն

դռոգքյաղչոմաղ զռհոտվ՝նեղՊ յւկզվ՝ ոհ կոգնեզտ զժօ ոՇվր ինմա ՝յոզտատո հ՝ ՇոՆժզոՆ ենժաՇոմզկտատո կդատոմ դամզգկոչժզվ՝ն «վՇ՝հոկ ՃզՎ–վ՝ռ՝–վ ՇՆՏ» ՆաղահյոմոատոմՆ զօտզօ՝ն ոմզգտատոՇոՆ ժատոկՇՃոչ կոռզտ զգրտ ժոյտՆ նզոմտա ՇռՆ՝վ՝ռ–զռհոտվ՝նեղՊ զղատ յգատոոմատոո ՃհՎ հ՝ն զռգքյահոմժոատոՇ նահ–ՃՊ գ ռ՝ոմզգնեռոհյատոՑ ՝տոՊ ՀզգտՑ՝ռզտՆ յւկզռ ղվտոՊ

Ղ՝նոՊ ՃռՊՇՀ՝ոՃաՇՀ՝վ ՂՇ, Գ՝ժռ գ՝ժգ, ՝չոհ գտաՇ՝ պ՝տռՕ

ԴՈՓՈՂՀՈՅՀՈ ՈՍՆՕՖ

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԱՒՃԱՌԱՏՈՒՆ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Ճեր Ընող

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամէն տեսակ պարէնն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար նզ, շաքար, խաղող, ձէթ, մաքարոնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիթներ, անուշեղէններ, գինի, քոնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոյ պէտքը զգալի է ամէն տան և մանաւանդ արաբար խոհանոցի մէջ։

Խիստ աժան և ամէն մրցում արհամարհող գիներ։

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿՖՕՐԹ

Դրամագլուխ ֆր. **6,250,000** Պահեստ տրամ **1,270,312** ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ չոգենաւով ուղարկելի ամեն տպրանք, ինչպէս և դրամածրար, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից

ՅԱԿՈԲ Դ· ՎԼՄՇԱՆ

Պ· ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՓՈՐԹԱՏՈՒՆ

Հայոց ձեռ փողոցը, Բեչէրլի Մոսկուին, ԹԻ– 106

Սոյն տեղական գործատունս, որուղղակի վերաբերեալ կաշիի, ձգախեժի և թէ լաթէ ամեն տեսակ պէտքերու լուսագրիը շինելու պատիւն ունի· ամենատաղիւս որսորդ մը իր քմահաճոյքը համեմատ ո և է խնդրանքի մը անմիջական պատասխանելիքը մեծ դիւրութիւն պիտի դտնէ։ Գտնուած ներկ ո և է խնդրանք կամ ցուցակ ամենայն ճշդութեամբ կը դրկուի։ Մեր ձեռնաց արտադրութիւնը ըլլալով ունինք նաև ճամբորդաց մեծ ու փոքր տոպրակներ, կանանց, դպրոցականաց, փաստաբանաց, գրագրաց, բաղանեաց, ծիծմըրներու զանազան պայուսակներ, դրամի և սիկարէթի դրամապանակներ, թղթապանակ, զանազան գոտիներ, կապերտ պայուսակներ, և այլն, և այլն։

Յոյս մեծ ունիմ թէ, Յարգելի Ազգայինս՝ ձայ գործատուն մը հաջողեցնելու ազնիւ զգացմամբ՝ իրենց պիտանի մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին։

Վ· ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենաընտիր կազմ, Նուագատետրներու և Տումարներու։

ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

17, Պուլպոքէտօ խան, Ֆրանկոյ Ըաղ

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԾԱՂԻԿՆԵՐ. Փունջ առաջին. Ո ՈՒԲԵՆ ՊՐԻՐԵԱՆ, կեդրոնատեղի Յակոբ Եֆ. Խպրանեան գրավաճառ և Լրավաճառ ի Պոլիս Կեսարիկ — փաշայ, գին 5 դահեկան. գնուառներու յանձնարարութեանց փոխան նամակագրշմ ևս կընդունուի. Փունջ երկորդ ընդ հուպ հրատարակելի։

ԵՐԱԽՏԻՐԻՔ, բանաստեղծական և թատերական տրամակ և տագաչտական գրուածոց — Գրեց Գ. Մ ԷՕԼՄԷԶԵԱՆ, հրատարակիչ Պ. Պալենց կ. Պոլիս. Չաքմաքճլար, թիւ 20. Բաժանորդագին 3 դրշ. Կեսա տպագրութեան 7 50։

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԻ, յօրինեց Օր. ՍԱՓԻՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ, ի պետս ազգային վարժարանաց. Գին 2 դրշ. տպագր. Պատատեան։ կեդրոնատեղին Սմբատ Դաւթեան, Գալաթիոյ խան, Պաճէ-Քաւուկ, կ Պոլիս։

ԳՐԱՑՈՒԹԱԿ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ կազմեց Վ.Ա.ՀԱՆ Գ. ՋԱՔԴԱՐԵԱՆ Ա. Տարի 1893, Գին 10 դրշ. Հրատարակած է Յունվարի տ'տրն և պատկերազարդ, Տարուան բաժանորդագրութիւնն է, 10 դրշ. փոստի ծախքով 12։ Կէսը 4 դրշ. իսկ վաճառատանց և Գրավաճառաց ձրի կը տրուի։

Գրպանի Բառարան ՀԱՅ-ՖՐԱՆՍԵՐԷՆ (25000 բառ) Ե. ՏԵՄԻՐՁԻՊԱՇԵԱՆԻ հրատարակիչ Զարեհ Թորոսեան. Տպագր. Յ. Մատթէոսեան — Գին պարզ 15, լաթակազմ 17 1/2, կիսակաշի 20։

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ յօրինեց Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ. Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 թերթ պիտի լինի, Բաժանորդագինն է պարզ կազմ 30 դրշ. լաթ. 35, կիսակաշի 40, Օտար երկրաց համար 7 և 8 ֆր. լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոսաին ծախքը գնողին վրայ լինելով, փափաքողք պարտին դիմել հրատարակչին, Զ. Թորոսեանի Պոլիս, Պահճէ-Գաբու, նոր բոստին գէմ, թիւ 4, ուր է միակ կեդրոնատեղին։ Ա. Թերթն ձրի երբ նմուշ կը տրուի։ Հրատարակուած է 35րդ թերթն, Բաժանորդագրութիւնն ի մեզ կը փակուի երբ 40րդ թերթը հրատարակուի։

Անոնք որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'խնդրուին որ երկերնոց օրինակ խմբագրութեանս հասցնեն։

ԱԶԴ

Ա՛ն բաժանորդներն որ Ա. ՄԱՄՈՒԼՈՅ թիւերն ժամանակին կամ բնաւ չեն առանաց, կ'խնդրուի որ հաճին անմիջապէս իմացնել խմբագրութեանս. Հակառակ պարագային մէջ, ո և է դանգատ անընդունելի ու անլսելի պիտի նկատուի։

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ

Օրինապահ երաշխաւորեալ Բարձր Կառավարութենէ ի ՀԱՄՊՈՒՐԿ

500,000

Մարք կամ

ՖՐԱՆՔ **625,000**

Իրրև մեծագոյն բաժին պիտի ընծայուին ամենէ երջանիկ չահողինը նոր մեծ վիճակահանութենէ դրամագլխոց, Համպուրգի Կառավարութենէ երաշխաւորեալ։

Բայց ո և է պարագայի մէջ

1	Պարգև, մարք	300 000
1	Բաժին, Մարք	200 000
1	» »	100 000
2	» »	75 000
1	» »	70 000
1	» »	65 000
1	» »	60,000
1	» »	55 000
2	» »	50 000
1	» »	40 000
5	» »	20 000
3	» »	15 000
26	» »	10,000
56	» »	5 000
106	» »	3 000
253	» »	2 000
6	» »	1,500
756	» »	1 000
1237	» »	500
33910	» »	148

1893ի Բաժին մարք 300, 200, 150
127, 100, 94, 67, 40, 20։

Դրամագլխոց ամենէ կարևոր վիճակահանութիւնն է պուրկի բարձր Կառավարութենէ արտօնեալ և Պետութեան ամբողջ կալուածոք երաշխաւորեալ կը պարունակէ 110,000 տոմսակ, որոց 55,400 ապահովապէս պիտի շահին, այս պատճառաւ ճակատագրութեան մէջ դրմագլուխն է գրեթէ

13,000,000

ՖՐԱՆՔ ՈՍԿի

Այս դրամական վիճակահանութեան նպաստաւոր կազմութիւնն այնպէս կազմուած է որ ստորև նշանակուած ամեն 55400 գիներէն ապահովապէս պիտի որոշուին 7 յաղթական դասակարգի մէջ։

Առաջին դասակարգի գլխաւոր բաժինն է 50,000 մարք երկրորդ կարգինը 55,000 մարք, որ երրորդին կ'բարձրանայ 60,000 մարքի, չորրորդին 65,000 մարք, հինգերորդին 70,000 մարք, վեցերորդին 75,000 մարք, և եօթերորդին 500,000 բայց ո և է պարագայի մէջ 300,000, 200,000 մարք կայ

Ստորև յիշուած առևտրական տունն յարգանք հրաւիրէ զոյն գրովս մասնակցիլ այս մեծագումար ճակատագրութեան։

Ան անձինք որ կը փափաքին գրուիլ կը խնդրուին իրենց ընտրած տոմսակներուն դիմումներն յղեն Փրանսա Դրամատան դրամատոմսերով, կամ եւրոպական և է դրամատան, կամ առնլի դիւրին պիտի լինի յղել տան միջազգային բդքատարական ճրամանագրո ֆրանսական թղթատան միջոցաւ,

Առաջին կարգի վիճակահանութեան գինն է		
1 տոմսակ ամբողջ նախնական	Ֆր.	7,50
1 կիսատոմսակ նախնական	»	3,75
1 քառորդ տոմսակ նախնական	»	1,90

Հետևեալ կարգերու տոմսակաց գինն ինչպես նաև մեն գիներու բաշխումն և վիճակահանութեան թուական ներն, վերջապէս ամեն մանր տեղեկութիւններն կարելի գտնել պաշտօնական յայտագրին մէջ։

Ամեն ոք պիտի ընդունի նախնական տոմսակին Պետական գրոշմով ինչպես նաև վիճակահանութեան պաշտօնական յայտագիրը, որու մէջ կ'երևի ամեն կարևոր մանրամասնութիւնք։ վիճակահանութենէ անմիջապէս ամեն շահակից պիտի ընդունի քաշուած պարգևներ պաշտօնական ցուցակը Պետական գրոշմով։ Բաժինները յայտագրին համաձայն շուտով պիտի վճարուին սութեան երաշխաւորութեամբ, գիները վճարելի Ազբայտկան մարքով։ Ամեն հաւանականութեան համար' եթէ երբեք վիճակահանութեան յայտագրին շահ մը անյարմար թուի պատրաստ ենք վիճակահանութենէ առաջ անյարմար դումարը հատուցանել։ փափաքողին կարող կանխաւ յղել վիճակահանութեան պաշտօնական յ ագրեր ձրիապէս ի տեղեկութիւն։ կ'ապահովենք որ գրուելիք փափաքողները հաճին կարելի եղածին չափ շուտով դիմել իրենց հրամաններն բայց ո և է պարագայի մէջ նախքան

25 Մայիս 1894 Ն. Տ.

ՎԱՃԱՌԴԻՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Դրամատուն ՀԱՄՊՈՒՐԿ

Ազատ Քաղաք, Գերմանիա